Պղտամշակութեանը՝ արդյունաբեր ճյուղ և հանդիսանում Հայաստանի զուգարտնտեսութեան համար, թարմ մրգերի արտածումով և մանավանդ պահածոների (կոնսերվների) արտադրութեամբ: Նախապատերազմ. 1914 թ. Հայաստանն արտադրել և 120-130 հազար փութ պահածոներ (դեղձ, ծիրան, կեռաս, սալոր) և այլորն: Ապագայում իրենց արտադրութեամբ կարող են հասցնել մինչ 500,000 փութի, մոտ 3 միլիոն բուբլու արժողութեան:

11. ԿՈՈՊԵՐԱՅԻՄՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի կենսովիճվարի տվյալները կոոպերացիայի բնագավառում ակնհայտ կերպով ցույց են տալիս, վոր

կոոպերացյան հաստատունն և հարա-
ճուն զարգացել և 1924—25 թվին (հոկ-
տեմբեր—հունիս)։

Վերահիշյալ ժամանակամիջոցում
թվերը զանազան տիպի կոոպերատի-
կազմակերպությունների նկատմամբ
ցույց են տալիս հետևյալը.

ա) Սպառողական կոոպերացիա. —
Սպառողական կոոպերատիվ ընկերու-
թյունների թիվը 1924 թ. հոկտ. ամ-
սում կազմում էր 71, ինչը ամսից հե-
տո այդ թիվը թեև պակսել և 1ով (70).
բայց տեղական ձեռնարկների թիվը
աճել և 115-ից 177 կամ 53, 91 տո-
կոսով, բաժանմունքներինը — 59 - ից
հասել և 119-ի կամ աճել 101, 69 տո-
կոսով, անդամների թիվը — 28,796-ից
աճել և մինչև 43,744 — 51, 91 տոկոսով
բաժնային դրամագլուխը 75740 - ից
բարձրացել և 128309 — 69,41 տոկոս,

հիմնական դրամագլուխը — 120,766-ից
բարձրացել և 242,786—101,04 տոկոս։

Այստեղից մենք տեսնում ենք, վոր
սպառողական կոոպերացիան անընդ-
հատ աճել և։

բ) Դյուղատնտեսական վարկային
կոոպերացիան. — Ընկերությունների
թիվը 16-ից աճել և 23 կամ հավելում
75 տոկոս, անդամների թիվը 5,664-ից
հասել և 10,333-ի կամ աճել 82,42 տո-
կոսով, բաժնային դրամագլուխը ունե-
ցել և փոքրիկ նվազում — 88,535 - ից
իջել և 88,137-ի կամ նվազել — 0,45 տո-
կոս, հիմնական դրամագլուխը աճել և
5,192-ից մինչև 26,641—413,12 տոկոս։

Կոոպերացիայի ձեռնարկներից, կան
4 գինու պահեստ, 4 դարբնոց, 3 վար-
ձու կայան և մեկական՝ կանեփի ար-
հեստանոց, վետչինայի, կոնսերվի, կո-
նյակի գործարաններ, ապա ջրաղաց,

փուռ, ձիարուծարան, խանութ և պլուգանրագործարանները — 33-ից բարձ-
 րեյի գործարան ձեռնարկությունները 51-ի կամ աճել 54,5 տոկոս-
 4) Կաթնաստնտեսական կոոպերատիվները (արտելներ)։ — Կաթնաստնտեսա-
 կան արտելները Հայաստանում զգալիորեն զարգացել են թե քանակով և թե
 որեն զարգացել են թե քանակով և թե որեն զարգացել են թե քանակով և թե
 դրամական միջոցներով։ այսպես մենք տեսնում ենք, լիոր այն ժամանակ, յերբ
 տեսնում ենք, լիոր այն ժամանակ, յերբ տեսնում ենք, լիոր այն ժամանակ, յերբ
 հոկտեմբ. ամսում (1924 թ.) կոոպերատիվ հիմքերով կազմակերպված ար-
 տելները կազմում եին ընդամենը 33, իսկ 1925 թ. հոկտեմբ. ամսում
 իննը ամսից հետո դրանց թիվը հաս-
 նում է 69-ի, կամ աճում 109,1 տոկոս։
 Անդամների թիվը 2254-ից բարձրանում
 է 5094 է 126,0 տոկոս, կովերի թիվը
 3604-ից հասել է 14968—74,0 տոկոս
 բաժնեվճարային դրամազուխը աճել է
 22.714-ից մինչ 44,452-ի 95,7 տոկոս,
 հիմնական դրամազուխը — 1767-ից հա-
 սել է 5158-ի կամ աճել 208,9 տոկոս-

անրագործարանները — 33-ից բարձ-
 րեյի գործարան ձեռնարկությունները 51-ի կամ աճել 54,5 տոկոս-
 4) Կաթնաստնտեսական կոոպերատիվները (արտելներ)։ — Կաթնաստնտեսա-
 կան արտելները Հայաստանում զգալիորեն զարգացել են թե քանակով և թե
 որեն զարգացել են թե քանակով և թե որեն զարգացել են թե քանակով և թե
 դրամական միջոցներով։ այսպես մենք տեսնում ենք, լիոր այն ժամանակ, յերբ
 տեսնում ենք, լիոր այն ժամանակ, յերբ տեսնում ենք, լիոր այն ժամանակ, յերբ
 հոկտեմբ. ամսում (1924 թ.) կոոպերատիվ հիմքերով կազմակերպված ար-
 տելները կազմում եին ընդամենը 33, իսկ 1925 թ. հոկտեմբ. ամսում
 իննը ամսից հետո դրանց թիվը հաս-
 նում է 69-ի, կամ աճում 109,1 տոկոս։
 Անդամների թիվը 2254-ից բարձրանում
 է 5094 է 126,0 տոկոս, կովերի թիվը
 3604-ից հասել է 14968—74,0 տոկոս
 բաժնեվճարային դրամազուխը աճել է
 22.714-ից մինչ 44,452-ի 95,7 տոկոս,
 հիմնական դրամազուխը — 1767-ից հա-
 սել է 5158-ի կամ աճել 208,9 տոկոս-

աճել է 66,5 տոկոս. կոոպերացման
յենթակա այգիների տարածությունը
վորը հոկտեմբեր ամսին հավասար է
387 դեպատինի, աճել է մինչ 733 մեկ
քարորդ դես. կամ 91.0 տոկոսով. հիմ-
նական դրամագլուխը 860 ուրբու-
հասել է 1315 ո. կամ աճել է 53,
տոկոսով. բաժնային դրամագլուխը
10.460-ից բարձրացել է 11,798 ո. կամ
աճել է 13,4 տոկոս:

Այգեգործական ընկերությունները
ունեն 8 գինու պահեստ և 1 կոնյակի
գործարան:

զ) Շերամապահական ընկերու-
թյուն. — Շերամապահական ընկերու-
թյունը ըստ քանակի մնացել է գրեթե
անփոփոխ. այն ինչ անդամների թիվը
հասել է 10-ից 28-ի կամ աճել — 180,0
տոկոսով. բաժնային և հիմնական դրա-
մագլուխը 110-ից բարձրացել է 308-ի

կամ աճել է 180,0 տոկոսով: 1925 թ.
ունվար ամսից ընկերությունը ունի
երամապահական կայան:

ե) Ժխսխոտագործների ընկերու-
թյուն. — Ինչպես մեղվաբույծների թի-
վը, նույնպես և ծխախոտագործներինը
սա քանակի շատ չնչին է (սկզբի շը-
նուսում մեկ ընկերություն). այնուհետև
ավելացել է մեկով. անդամների թիվը
սակայն զգալիորեն աճել է 25-ից 174-ի
596,0 տոկոս. նույնպես և աճել են բաժ-
նային դրամագլուխը — 660 — 588 կամ
124,0 տոկոս. հիմնական դրամագլուխը
75-ից բարձրացել է 352 — 369,33 տո-
կոս: Կոոպերացման յենթակա տարա-
ծությունը ծխախոտի պլանտացիայի
հուլիսի 1-ին հասնում էր 121 դես.:

ը) Խառն գյուղատնտեսական ըն-
կերությունների ցանցը. — Ինչը ամսվա
ընթացքում նույնպես աճել է. այսպես

հոկտեմբերը ամսում մենք ունեյինք ընկ., այն ինչ առ 1-ն հուլիսի այդ պիսիների թիվը հասավ 14-ի աճել 75,0 տոկոսով, նույնը և անդամների թիվը, 225—472 109,77 տոկոս, բաժնային գրամագլուխը 7025-ից աճել 7531 կամ 7,23 տոկոս, հիմնական 664-ից աճել և 731 կամ 29,52 տոկոսով:

Առ մեկն հուլիսի խառն տիպի գյուղատնտեսական ընկերությունները ունեյին մեկական հատ կղմինտրի գործարան, կահկարասիք պատրաստող արհեստանոց, գինու պահեստ և ելեք-տրական կայան:

Թ) Բամբակագործական մեղիորատիվ, աշխատանք հողոգտագործական ընկերությունները. — Սրանք բոլորն էլ առաջ են յեկել վերջին ամիսների ընթացքում դեռ ևս թե անդամների

թվով և թե գրամական կապիտալով: Պույլ են վորոնց վրա մենք կանգ չենք առնում:

ժ) Տնայնագործական ընկերություն. — Սույն թվի մայիս ամսվանից հայաստանում կակմակերպվել և և արդեն գործի յե անցել մի տնայնագործական ընկերություն վորի անդամների թիվը չի անցնում 35-ից բաժնային և հիմնական գրամագլուխը միասին վերցրած կազմում և 385 ո.: Ինչ խոսք, վոր այս տիպի աստոցիացիներ հայաստանում ծրագրվում և կազմակերպվել ամենուրեք և մենք մոտիկ ապագայում կը տեսնենք տնայնագործական ընկերությունների ընդլայնված ցանց:

B.

ԳՈՐԺԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

1. ՎՈԳԵԼԻՅ ԸՄՊԵԼԻՆԵՐ

Մինչ խորհրդային կառավարութիւնը հաստատումը՝ Հայաստանում գոյություն են ունեցել մեծ մասամբ մանկավարժական կոնյակի, պահածոների, բամբակազտման և ուրիշ իսկ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները միայն գոյություն ունեյին Ալեքսանդր և Ղաթարի պղնձահանքերը և Իրենց համապատասխան գործարաններով ու նախկին Շուստովի աշխարհատի» կոնյակի և ողու գործաններ, վորոնք պատերազմի ժամանակամիջոցում բոլորովին դադարեցին գործելուց:

Այժմ գործում են նախկին Շուստովի Արարատի» կոնյակի գործարան պեռականացրած:

Վորովհետև այգեգործությունը վեռականգնել և հասնելով նախապատեռագմականի 75 - 80% -ին հում նյութը պատ և, վոր միայն «Արարատ»ը այլևս չի կարողանում բոլորը վերամշակել, և 1925 թվից բացվում են հետգետե և ֆաբրիկա գործարանները:

2. ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կա 2 կաշեգործարան, վոր 1922 թվին նորոգվել են, ավելացրել են մեքենաներ, վորոնց մեքենայա-

ցումը հասել է 80%-ի: Կատարելագործման աշխատանքները տարվում են:

3. ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բամբակագործությունը Հայաստանում ունի խիստ մեծ հեռանկարներ: Բամբակի մշակույթի հետ սկսում են զարգանալ մի շարք գործարանական արդյունաբերություններ, վորոնք, իբրևոր սկսական ձևնարկություններ սարքված են կատարելագործված մեքենաներով և հարմարեցված են մեծաքանակ արտադրություն հանրին: 1925 թ. բացվել են բամբակազտիչ մեծ գործարաններ՝ Յերևանում, Սարգարաբաղյանկաթուղակայանում և Մեղրիում: 1925 թվին Յերևանում ավարտվել է ձիթահան ու ոճառի (սապոնի) հսկայական գործարանի կառուցումը:

Բամբակի հետ կապ ունի Հայաստանի անդրանիկ մանվածային (տեկստիլ) գործարանի կառուցումը, վորի հիմքն դրվել 1924 թ. Լենինականում, վորպեսզի ապագայում այդ գործարանի ավարտումով Հայաստան ունենա պատրաստված և հմուտ ջուլհակներ, անհրաժեշտ է սեպվել կազմակերպել դպրոց-գործարան 30 հորերով, որտեղ սովորում են 120 աշակերտ: Այդ հորերի թիվը հետզհետե ավելացել է: 1925 թ. պատրաստվել է մանարան գործարանը 2,100 իլիկով, վորտեղ սովորում են այժմ 400 հոգի:

Հիմնական գործարանի ավարտումը սպասում է 1925 թ., վորտեղ աշխատելու յեն 1000-ից ավելի բանվոր, այս գործարանը սպառելու յե տարեկան 50,000 փութ զտած բամբակ: Այս գործարանի ամբողջ սարքը՝ մեքենաները,

իլիկները (16,000), հորերը (5,000) իրենց ոժանդակ պարագաներով, 4 տարի առաջ ընծայաբերված և Հայաստանին խորհրդային Ռուսաստանի կողմից որոնց տեղափոխության համար գործածվել են ընդամենն 97 ապրանքատվագոն:

4. ՏՊԱՐԱՆՆԵՐ

Հայաստանի խորհրդայնացումով բոլոր տպարանները, թվով 5, վորոնց գտնվում են Յերևանում, հանձնվել են պոլիգրաֆտրիստին: Տպարաններ ունեն և պետական հրատարակչությունը մեկը եջմիաձևում (վանքապատկան և մյուսը Յերևանում: Վորովհետև հրաբոլորի սարքավորումը հնացած էր, պետությունը բերել և տվել Գերմանիայից կատարելագործված տպագրիչ մեքենաներ և տողաշարներ:

ԹՎԱԿԱՆ ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեթե 1922 թվականի արտադրականությունը հաշվի 100, այն ժամանակ հաջորդ տարիների համար ստացվում են հետևյալ պատկերը:

	1923թ.	1924թ.
Դիւիի և կոնիակի արտադրութ.	234 ⁰ / ₀	510 ⁰ / ₀
Տպագրական (պոլիգրաֆիկ)	138 ⁰ / ₀	179 ⁰ / ₀
Ելքադրականություն	101,6 ⁰ / ₀	145,3 ⁰ / ₀
Հաշվի արտադրություն	100 ⁰ / ₀	144,3 ⁰ / ₀
Մեքենագործար. արտադրութ.	100 ⁰ / ₀	239 ⁰ / ₀

Գ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. ԴՊՐՈՑՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐ ՅԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Անցյալ 1925 թ. Հայաստանում պետական մատակարարման մեջ եին 749

դպրոց, մինչդեռ 1924 թ. 692 դպրոց
1923 թ. 577 դպրոց:

	Ուսուցչություն	Աշակերտություն
1925 թ.	2,334 հոգի	73,000
1924 »	1,675 »	53,700
1923 »	1,336 »	50,400

Այս թվերի մեջ չեն մտնում Ամերիկական նպաստամատույց կոմիտեի ու պետական մատակարարումից դուրս գտնվող դպրոցները:

Նույնպիսի աճում և զարգացում կատարվել և պետական համալսարանի, յերաժշտական բարձր դպրոցի (կոնսերվատորի), բանվորական ֆակուլտետի ուսանողություն և ուսուցչություն մեջ: Զարգացումը կատարվել և ոչ միայն բանակով այլ և որակով:

ՊԱՅՔԱՐ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

«Հասակավորների անգրագիտությունը վերացնող կայանները», վորոնք՝

1923 թ.	յեղել են	319 հատ սովորել են	6,400 հոգի
1924 »	»	449 »	8,500 »
1925 »	»	509 »	17,500 »

այստեղ չեն հաշված կարմիր բանակում արհեստակցական միություններին կազմակերպված կայաններում սովորողներին: Բացի սրանցից յեղել են 200-ի չափ դպրոցներ, հասակավոր խազրագետներ համար:

3. ԳՐԱԴԱՐԱՆ ՅԵՎ ԹԱՆԳԱՐԱՆ

Ներկայումս Հայաստանում գոյություն ունեն մի շարք կուլտուրական հաստատություններ, վորոնք միայն խորհրդային իշխանության որով են ծնունդ առել և հետզհետե զարգանալով, այսօր դարձել են պատկանելի հիմնարկություններ ու ծառայում են ժողովրդական զանգվածների լուսավորության գործին: Դրանք են Հանրային

գրադարանը, պետական կենտրոնական
թանգարանը, գիտական ինստիտուտն
եջմիածնում, պետ. թատրոնը: 1925 թ.
սրանց ավելացավ նաև նորահաստատ
«Գիտությանց կաճառը» Յերևանում,
պետական համալսարանին կից: Հան-
րային գրադարանի գրքերի քանակն
և 200,000 հատոր, վորը հետզհետե ա-
վելանում է:

Պետական թանգարանը ունի 4 բա-
ժանմունք՝ հնագիտական, հեղափոխա-
կան, գրական—պատմական և պատկե-
րասրահը: Բացի վերոհիշյալ կենտրոնա-
կան կուլտուրական հիմնարկություն-
ներից, Հայաստանի զանազան վայրե-
րում 2925 թ. գործում էին 2 թանգա-
րաններ, 13 գրադարան-ընթերցարան-
ներ, 24 թատրոնական բեմեր, 13 բան-
վորական ակումբներ, 375 խրճիթ-ըն-
թերցարաններ:

4. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Հետևյալ թվերը պարզ են կացուցա-
նում Հայաստանի «Պետական հրատա-
րակչության աշխատանքները լույս ըն-
ծյալ գրքերով:

Թվական	Անուն	Որինակ	Արժեք ո.
1921	10	21,800	8,460
1922	48	165,900	73,600
1923	31	138,700	103,900
1924	51	256,20	190,215
1925	56	350,400	163,805
Գումարը՝	186	933,000	539,970

5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ՝

1921 թ. 1. «Խորհրդային Հայաստան»
որաթերթ. 1925 թ. սպառվում էր 700
տոկոս ավել. 2. «Մաճկալ» գյուղացի-
ական շաբաթաթերթը՝ 850 տոկոս.
3. «Ավանդարդ» կոմուն. յերիտ. միու-
թյան շաբաթաթերթը՝ 400 տոկոս:

1925 թ. լույս են տեսնում բացի վերոհիշյալ յերեքից, նաև հետևյալ պարբերականները— 4. «Նոր ակոս» յերկշաբ 5. «Գյուղատնտեսական կյանք» ամսաթ. 6. «Հայաստանի Աշխատավորուն» ամսագիր. 7. «Աշխատանք» յերկշաբ. 8. «Նորք» տարեկան 1 ամսվարհատոր: Գավառներում՝ 9. «Բանվոր» շաբաթ. Հենինականում, 10 «Կարմիր Ռաշպար» Գորիսում (Զանգեզուր.) 11. «Ազատ Յեկեղեցի» ամսաթ. Յերևանում և 12. «Կարմիր Մոծակ» յերգիծ. թերթ 1926 թվին:

6. ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ ՔԱՂԱՔ

Ամերիկահայ Արարկերցիների միությունը ստանալով Խորհրդային Հայաստանի կառավարության հաճություն և վորոշյալ տեղ սկսել են ժողովարարություն անել և այդ վորոշված տեղում

ինել «Նոր Արարկեր» անունով քաղաքագաղթել դեպ իսկական հայրենի ոջախ: Այդ քաղաքում շինվում և նոր յեկոտական ձևի հատակագծով, վորը պատրաստել և հայտնի ակագեմիկոս թումանյանը:

Քաղաքի շինությունը արդեն սկսված և Յերևանից յերկու կիլոմետր հեռավորության վրա, Հրազդան և Գետարչա գետերի մեջ տեղ: Գետնի տարածությունն և 610 դես.:

Սրանից 210-ը հատկացված և բնակարանների համար, վորոնք կարող են հասնել մինչ 1000-ի: Մնացած 400-ը պիտի գործածվի այգիների, թթաւտանների, և յերկրագործական ուրիշ բարձր մշակույթների համար: Առաջին նվազ շինվում և 100 հատ բնակարան, վորոնք անմիջապես փոխադրվելու յեն

և պարապելու յեն շերամապահությամբ
և մանվածագործությամբ:

7. ՀԵՌԱՆՈՍՆԵՐ

1925 թվից սկսվել է հեռախոսային
ցանցի լայնացման աշխատանքներ
շինվում յեն յերկու նվազ հերախոսա-
գծեր: Առաջինը ունենալու յե 1,197 կի-
լոմետր յերկարություն, 37 հեռախոսա-
գծերով: Իսկ յերկրորդ՝ 731 կիլոմետր
յերկարություն 30 հերախոսագծերով:

8. ԽՃՈՒՂԻՆԵՐ և ՅԵՐԿԱԹՈՒՂԱԳԾԵՐ

Մի շարք նոր խճուղիների կառույց
ման աշխատանքները 1925 թվականին
մասամբ ավարտած՝ շարունակվում են:

ա) Կառուցվում է նոր յերկաթուղա-
գիծ Աղստաֆա կայարանից (Ագրբեյ-
ջան) դեպի Իջևեման և ապա Դիլիջան:
Այս գիծը ապագայում Սեվանալճի մո-

տից միացվելու է Յերեվանի հետ:
բ) Կառուցվում է նույնպես մի նոր ճյուղ
դեպի Ղաթարի պղնձահանքերը, Բու-
ղու-Ջուլֆա յերկաթուղագծից: գ) Փոխ-
վում է Լենինական-Յերեվան յերկա-
թուղային գիծը՝ վոր Սարդարաբա-
ղից սկսած նոր ուղղություն է ստա-
նում, անցնելով անմիջապես Եջմի-
ածնի վրայով Փարաքար գյուղով ուղ-
ղակի Յերևան, և ապա այստեղից մի
շարք գյուղերի և Ղաթարլուի վրայով
դուրս կըգա վերըստին շարունակելու
հին ուղղությամբ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Ելիավայի զեկուցումից.

Խորհրդային Վրաստանն առաջադիմության և զարգացման հսկա քայլեր է արել խորհրդայնացման առաջին հնգամյակում: Ստանալով նախկին ազգայնական մենշևիկ կառավարությունից իբրև ժառանգություն մի քայքայված և կոլոպտված յերկիր, Վրաստանի բանվոր-գյուղացիական կառավարությունը հինգ տարիների ընթացքում վոչ միային վերականգնել

և այն, այլև տնտեսության վորոշ ճյուղերում անցել մինչպատերազմյան դրությունից և վոք է գրել վերելքի ճանքան: Այժմ Խորհրդային Վրաստանի բանվոր-աշխատավորության առջև բացված է տնտեսական շինարարության մի գեղեցիկ հեռանկար, վորի իրականացման համար կատարվում են համապատասխան աշխատանքներ:

Ա. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վրաստանը գյուղացիական յերկիր է. ազգաբնակչության մոտ 80 տոկոսը զբաղվում է գյուղական տնտեսությամբ, ուստի և տնտեսական նվաճումներն առաջին հերթին աչքի են ընկնում հենց գյուղատնտեսական ասպարեզում:

Յանքսի Տարածությունը — Մինչև համաշխարհային պատերազմը — 1913 թ.,

ցանքսի տարածությունն եր վրաստանում 710 հազ. դես., մենչևիկները որոք իջավ 522,000-ի իսկ 1925 թվին բարձրացավ 616,000 դես.: Այնպես վոր համարյա թե այդ անպարեզու հասել է մինչպատերազմյան դրության:

Այգեգործություն. — Խաղողի այգիների տարածությունը վրաստանում աստիճանաբար նվազել է ֆելուկսերայի պատճառով: Պատերազմից առաջ այգիների տարածությունը յեղել է 45,000 և ավելի դեսյատին: Խորհրդայնացման շրջանում՝ 30,000 դես.: Այգիների բերքը 1911 — 15 թվերին տվել է 7,233,000 վեդրո, 1917 թվին 4,735,000 վեդրո, իսկ 1924 թվին 5,484,000 վեդրո: Ասպիտով յուրաքանչյուր դեսյատին մինչպատերազմյան շրջանում տվել է միջին թվով 160 վեդրո, իսկ 1924 թ. 170 վեդրո:

այսինքն 6,25 տոկոսով բարձրացել է բերքատվությունը Խորհրդային իշխանության որով: Բացի դրանից ընդարձակվել են ամերիկյան վորթերի տնկարանները և ստեղծվել նորերը: Այդ տնկարանների ընդհանուր տարածությունն եր մինչև պատերազմը 14 հազ. դես. իսկ այժմ այդ տարածությունը մեծացել է ավելի քան հինգ անգամ, հասել է 76 հազ. դեսյատին:

Պտղաբուծություն. — Մրգատու այգիների տարածությունն է 17 թվին 7,303 դես., իսկ 24 թվին՝ 8,556 դես. ավելացել է 17 տոկոսով:

Ծխախոտի մշակություն. — 17 թ. բամբակի պլանտացիաները բռնում էին 1,200 դես. 15,800 փութ բերքով. 1925 թվին 4,500 դես. տարածություն 50,000 փութ բերքով իսկ 25 թվին այդ տարածությունը հա-

սել և 5,871 դեսյատինի, այսինքն համարյա հավասարվել 15 թվի տարածության (5,000 դես.): Բամբակի կազմակերպություններն այդ նպատակով գյուղացությանը տվել են 704,000 ռուբլի կանխավճար, կառուցել և յերեք նոր բամբակազտիչ գործարան:

Շերամապահություն. — 1914 թիվը, յերբ ամենաբարձր զարգացման և հասել տնտեսության այդ ճյուղը Վրաստանում, տվել և 105,000 տուփ սերմ և 128,000 փութ հում բոժոժ: 18 թիվը՝ 32,000 տուփ սերմ և 40,000 փութ հում բոժոժ. իսկ 24 թվին 104,000 տուփ և 139 փութ — հասել և 1904 ռեկորդային տարուն:

Թեյի մշակումն. — 1914 թիվը աճվել և 265,550 ֆունտ թեյի, 20 թվին իջել և 202,066 ֆունտի, 24 թվին բարձրացել 376,000 ֆունտի:

Անտանաքուծություն. — Այս ասպանեղում բավական տուժել են. մի կողմից կորել և պատերազմի ժամանակահատվածին քանակությամբ մանր անասուն, մյուս կողմից արոտավայրերի բավական խոշոր տարածություն: Այդ պատճառով ծածկելու համար ույժ և տրված մեկիորատիվ աշխատանքներին: Խորհրդայնացման հինգ տարիներում կառուցված և վեց ջրանցք 114 վերստ յերկարությամբ 43,500 դես. վոդոգեկու համար: Շինվում և դարձյալ չորս ջրանցք 98 վերստ յերկարությամբ 26,400 դես. վոդոգեկու համար: Սկսված են Ալազանի հովտի (50,000 դես.) և Ելգարյան տափաստանի (80,000 դես.) վոդոգման աշխատանքները: Սկսված և նաև Սամգորի դաշտի (42,000 դես.) վոդոգման նախապատրաստական աշխատանքներ:

րը: Բացի դրանից սկսված և Փոթիի ճահիճների չորացման աշխատանքները:

Այս բոլոր նվաճումները գյուղատնտեսության ասպարեզում կապ ունենալն հողային ռեֆորմի հետ, վոր խորհրդայնացման հենց առաջին որերից կիրառվեց: Հողը խլվեց վոչ աշխատավոր տարրերից և հանձնվեց աշխատավոր գյուղացիությանը: Գյուղացիությանը տրվեցին ոգտագործելու վերջին տարին նաև տեղական նշանակություն ունեցող անտառները. մինչև այժմ տրված և 127.700 դեա. անտառ: Գյուղատնտեսության բարձրացմանը մեծապես նպաստեց նաև գյուղատնտեսական վարկը: Վրաստանի խորհրդային կառավարությունը հիմնեց Գյուղատնտեսական բանկ յերեք բաժանվունքով, մոտ 2.000.000 ռ. հիմ-

նական ղրամագլուխով: Դրա հետ միասին գործում են նաև 122 վարկային կոոպերատիվ ընկերություններ՝ 39,085 անդամով:

Բ. ԱՐԿՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Վրաստանը ժառանգություն ստացավ խզճուկ արդյունաբերական մասնավոր հիմնարկներ հնացած և 75 տոկոս մաշված կարգ ու սարքով: Այդ հիմնարկները կարելի չեղավ վերականգնել և աստիճանաբար զարգացնել: 1922 — 23 թվին արդյունաբերությունը տվեց 4.498.000 մինչպատերազմյան արտադրանք. 23 — 24 թ. — 4.823.000, իսկ 24 — 25 թ. — 8.980.000 ռ.: Համապատասխան չափով ավելացել և նաև բանվորների թիվը: Արդյունաբերության ճյուղերից Վրաստանում առաջին հերթին պետք և հիշատակել՝

Ճիւղերի մանգանը, վորի ստացման և արտահանման աստիճանական աճման մասին շատ և խոսվել և գրվել: Այժմ մանգանը տրված և կոնցիսիայով «Վրացական մանգան» ընկերությանը քսան տարով:

Զարածուխ.— Տղվիրուլի անխահանքից ստացվել է 1913 թվին 350 հազար փութ. այնուհետև նա ապրել է իր անկման շրջանը. իսկ 25 թվին ստացվել է 381.000 փութ քարածուխ, ավելի քան մինչև պատերազմը:

Ծխախոտը.— Զուգընթաց ծխախոտարուծության զարգացման, զարգանում է նաև նրա վերամշակումը: Մի տարվա ընթացքում՝ 24—25 թիվը ծխախոտի ֆաբրիկաների արտադրանքը բարձրացել է 41,67 տոկոսով:

Կաշի.— Աչքի ընկնող կերպով աճում է նաև կաշվի արդյունաբերությունը:

22—23 թվին պատրաստված է 16.233 խոշոր կաշի, 16.511 մանր կաշի, 4.220 զույգ յեվրոպական կոշիկ և 31.281 զույգ ասիական կոշիկ: 1924—25 թ. պատրաստված է 35.253 խոշոր կաշի, 30.586 մանր, 13.650 զույգ յեվրոպական և 88. 975 զույգ ասիական կոշիկ:

Անտառային արդյունաբերություն.
— Մինչև Խորհրդային իշխանությունը Վրաստանում անտառային արդյունաբերություն չի յեղել: Այժմ ձեռնարկված է այդ գործին, վորին հատկացրած է արդեն մոտ 2 000.000 ռուբլի: Նախագծվում է հիմնել թղթի և ճկուն փայտից կահեր պատրաստելու ֆաբրիկաներ, սղոցագործարաններ և այլն: Նույնպիսի սաղմային, բայց բազմախոստում վիճակում է նաև քիմիական արդյունաբերությունը:

Մանվածագործութիւն. — Խորհրդային իշխանութեան ձեռքի գործն է նաև Քուլթայիսի մահուդի գործարանը, վորն ամսական տալիս է առայժմ 3.000 մետր մահուդ, բայց մոտ ապագայում տալու յե 530.000 մետր: Կառուցվում է նաև մետաքսի գործարան Ոգուրգեթում, վորի կահավորանքը պատվիրված է արդեն արտասահմանում:

Բորժովի կոմբինատը. — Ածխաթըթվածային գործարանը խորհրդայնացման առաջին տարիները տալիս եր 9.260 կիլո. վերջին տարում նրա արտադրանքը հասավ 53.520 կիլոյի: Հանքային ջրերի գործարանը, վոր 1920 թվին իրացնում եր 383.000 շիշ Բորժովի ջուր, 1925 թ. իրացրել է 3.200.000 շիշ: Ապակու գործարանը որական տալիս է 12—14 հազար շիշ:

Ձատախ. — Ձատախի չուգունի գործարանը մինչև այժմ ոգտակար չէ յեղել մեղ համար: Սակայն հույս կա, վոր չուգունի պահանջի մեծացման հետ նա կգրվի կանոնավոր հիմքերի վրա և կդառնա ոգտակար:

Ելեկտրոֆիկացիա. — Ելեքտրոֆիկացիան ժողովրդական տնտեսութեան գործում ահագին դեր ունի կատարելու: Սույն թվի աշնանը կավարտվի Զեմո-Ավճալյան կայարանի շինութիւնը, վորն ունենալու յե 36,000 ձիու ուժ: Կառուցվում են Աբաշի և Աջարիայի կայարանները, կառուցվելու յե և Քուլթայիսի կայարանը Ռիոնի վրա:

Գ. ԼՈՒՍՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսի գործկոմի լուսավորութեան բաժնի աշխատանքը կատարվում է գլխավորապես յերեք ուղղութեամբ՝

մինչ զպրոցական կրթություն (մանկապարտեզներ և մանկատներ), զպրոցական կրթություն և աշխատանք հասակավորների միջև:

Մենչեիկներ ժամանակ թիֆլիսում և նրա գավառում մինչպրոցական կրթության գործը հավասար եր դեբոյի: Ներկայումս թիֆլիսում կա 22 մանկապարտեզ, 1610 յերեխա և 80 դեկավար: Բացի դրանից, աշխատանքային զպրոցին կից կազմված մանկապարտեզներում սովորում և 4111 երեխա:

Նույնպիսի վոլրալի վիճակի մեջ եր մենչեիկների որով անխնամ յերեխանց հոգատարության գործը: Մինչդեռ այժմ թիֆլիսը ծածկված և մանկապարտեզների ինտերնատների, զպրոց-կոմմունաների ցանցով:

Թիֆլիսի գործկոմի մանկատները այժմ տեղափոխված են Դուշեթ և Ադրուլախ, իսկ թիֆլիսում մնացել են միայն յերկուսը:

Ժողովրդական լուսավորության բաժինը կրթական աշխատանքներ և տանում նաև հասակավորների շրջանում:

Լուսժողկոմատի վիճակագրական տեղեկությունների համաձայն թիֆլիսում 1920 — 21 թվին, չհաշված բարձրագույն զպրոցները, յեղել և 139 ղանազան զպրոց հետևյալ կազմով՝ աշակերտ—32.642, դասատու—1.642:

Նույն թիֆլիսում 1925—26 թ. կա՝ 184 զպրոց, 47.653 աշակերտով և 2.648 դասատուով:

Այդ տեսակետից ավելի պերճախոս և թիֆլիսի գավառի պատկերը.— 1920 — 21 թ. զպրոցների թիվը—75, աշակերտ—4.179, դասատու—137. 1925 —

26 թ. դպրոցների թիվը — 176, աշակերտ — 17.233, դասատու — 600:

Հիշատակենք նաև դպրոցների և աշակերտների ազգային կազմը.

Դպրոցների թիվը բաղաձուլում ըստ ազգության

	Բյուճեցների			
	4-ամյա	7-ամյա	9-ամյա	ընդամ.
Վրացական	9	13	8	30
Ռուսական	6	10	5	21
Հայկական	5	11	5	21
Այլ ազգ.	5	5	2	12
Ընդամենը	25	39	20	84

Պատկերների թիվը բաղաձուլում ըստ ազգության

	Գուրբյուճեցների			
	4-ամյա	7-ամյա	9-ամյա	ընդամ.
Վրացիներ	2020	4342	5553	11915
Ռուսներ	779	2088	1240	4107
Հայեր	2140	6117	4959	13216
Այլ ազգ.	637	1896	945	3478
Ընդամենը	5576	14443	12697	32716

Ինչ վերաբերում է անգրագիտության վերացման, կիսագրագիտների դպրոցներ քաղաքում 1926 թ. կար 94, գավառում — 12. անգրագիտության վերացման կետեր թիֆլիսում 1926 թ. կար 72, իսկ գավառում — 184:

Բացի հիշատակված դպրոցական հաստատություններից, ժողովուրդինը ներկայումս թիֆլիսում ունի 11 մեծ ընթերցարան, 3 ակումբ, 1 թատրոն և 1 քաղաքային թանգարան, իսկ թիֆլիսի գավառում՝ 5 մեծ ընթերցարան և 36 խրճիթ-ընթերցարան:

Բ Ժ Ը Կ Ա Կ Ա Ն

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՏԵՐ

Ա.

Մանկան առողջապահություն

Յերեխայի կանոնավոր սննդատվությունը կարելի չե ստուգել կշռելով նրան ամեն որ: Կարելի չե նունակես ստուգել, թե վճիռքան կաթ ե ծծել յերեխան ամեն որ և ամեն անգամ ծիծ ուտելիս: Դրա համար հարկավոր ե կշռել նրան ծիծ տալուց առաջ և հետո: Դրանով կիմացվի բավարար ե սնունդը թե՛ վոչ:

Առաջին 2—3 որը ծնվելուց հետո, յերեխայի քաշը պակասում ե մինչև կես ֆունտ (300 գրամ), իսկ 3—4 որից հետո նորից ավելանում ե և 9—10 որից արդեն քաշը հավասարվում ե ծնված որվա քաշին:

Այստեղ ավելորդ չեմ համարում բերել յերեխայի քաշի աղյուսակը ամիսներով: Յերեխան ծնվելիս քաշում ե մոտ 8 ֆունտ (3100 գրամ):

Հասակ	Քաշը գրամով	Վճիռք, ավել, մի ամս, կամ մի տարում	Վճիռքան ե վճիռք, մի վոչոչ ժամանակում	Վճիռք, և ավել, ամս, միջին թվով
1 ամս. վ.	3870	770	3220 — 8 ֆ.	644 — 1 1/2 ֆ.
2 »	4623	753		
3 »	5305	685	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
4 »	5834	526		
5 »	6320	486	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
6 »	6785	465		
7 »	7240	455	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
8 »	7666	426		
9 »	8084	418	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
10 »	8479	395		
11 »	8855	376	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
12 »	1915—23 ֆ.	310		
2 տարվա	11080—27 1/2 ֆ.	915—5 ֆ.	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
3 »	12665—31 1/2 ֆ.	1585—4 »		
4 »	13990—35 »	1325—3 1/2 »	2845 — 7 ֆ.	403,5 — 1 ֆ.
5 »	15845—41 ֆ.	1855—4 1/2 ֆ.		

Մաշկի խնամասարութիւնը

Մոր գլխավոր հոգսերից մեկը պետք է լինի յերեխայի մաշկի խնամքը:

Կաշին կազմում է մեր մարմնի շատ կարևոր մասը:

Նախ և առաջ նա բնական պատճեն է հանդիսանում մեր մարմնի համար, պաշտպանելով նրան արտաքուստ վնասակար ազդեցութիւններից: Կաշվի վերջին մասը ծածկված լինելով անթափանցելի շերտով (էպիդերմիս), չի թողնում անցնել իր միջով քիմիական թուղիներին և ախտաբեր մանրակենդանուին, վորոնցովի յե մեր շուրջը, մյուս կողմից, ճարպային շերտը, վոր գրտնւում է կաշվի տակին, իրրե ջերմութիւնը վատ փոխադրող պահում է նրան մարմնի մեջ: Յերկրորդ՝ կաշին

բազմաթիվ գեղձերի (քրտնքի և ճարպի) գործարան է. քրտնքի հետ միասին արտադրելով ջուր, գազեր և ուրիշ քաներ, նա ոգնում է թոքերին ածխատուր և ջուր արտահանելում և նպաստում է յերիկամունքներին մեղի հետ միգատ (моченива) և ուրիշ նյութեր արտադրելում: Յերրորդ՝ կաշվի մեջ գտնվում են բազմաթիվ նյարդերի վերջավորութիւններ և այդպիսով նա ներկայացնում է մի գործարան, վորի միջոցով մենք զգում ենք ցավ, տաքն ու ցուրտը:

Վերջին հատկութիւնների շնորհիվ, կաշին ստանում է բազմաթիվ տպավորութիւններ արտաքին աշխարհից և տեղափոխում ներքին գործարանները: Այդպիսով նա ներգործում է ներքին գործարանների գործունեութիւն վրա:

Պարզ է ուրեմն, վոր խելացի խնա-

մատարությունը մաշկի մասին անհրա-
ժեշտ է յերեխայի առողջապահության
համար, իսկ անխնամ վերաբերմունքը
կարող է փնասել յերեխային:

Ի՞նչ պետք է անել:

Պետք է լվանալ:

Յերեխան չի կարող առողջ լինել,
յեթե նրա մարմինն չը լվանանք որա-
կան գոնե մի անգամ: Զուրը մաքրում
է հեռացնում է շատ հիվանդություն-
ների պատճառներ: Լողացնելը զովաց-
նում է մարմինը: Մաքրելով կաշին
քրտնքից և կեղտից, ջուրը նպաստում
է շնչառությանը, վորովհետև, ինչպես
հայտնի յե, կաշին նաև շնչառության
դործարանն է: Զուրը ամրացնում է
մարմինը և պաշտպանում է մրսելուց:

Յերեխայի գլուխը պետք է լվանալ
ամեն օր, թե չե նա սկսում է սաստիկ
թեփոտվել և կեղտոտվել, վորից հեշ-

տությամբ առաջ են գալիս խոցեր:
Երեխային լողացնելիս պետք է ուշա-
դրություն դարձնել այն ամանի վրա,
վորի մեջ լողացնում են. սա պետք է
լինի այնքան ընդարձակ, վոր կարելի
լինի յերեխային պառկեցնել նրա մեջ
և պատրաստված լինի այնպիսի՝ նյու-
թից, վոր կարելի լինի հեշտությամբ
մաքրել: Սենյակի տաքությունը, վոր-
տեղ վոր յերեխային լողացնում են,
պետք է լինի 17—18⁰: Ամենալավն է
անձրևի ջուրը: Զրի տաքությունը
պետք է լինի 27—28⁰ Բ.: Առաջին
տարում յերեխային պետք է լողացնել
ամեն օր: Յերկրորդ տարին կարելի յե
արդեն լողացնել որա մեջ: Իսկ հետե-
յալ տարիները բավական է շա-
բաթը մի անգամ: Ամենօրյա վաննա-
ների տեղությունը պետք է լինի
3—5 րոպե: Նրա մեջ լողացնելիս

բավական է 5 — 8, իսկ հետո 10 — 15
 րոպե վոչ ավել: Պետք է լողացնել ու-
 տելուց կամ քնելուց առաջ, իսկ յեթե
 հարկավոր է լինում մի վորևե պատ-
 ճառով յերեխային լողացնել ուտելուց
 հետո, այդ դեպքում պետք է սպասել
 ծծի յերեխաների համար մի ժամ ծիծ
 ուտելուց հետո, իսկ մեծերի համար
 2 — 3 ժամ հացից հետո: Լողացնելուց
 հետո շուտով չըհագցնել, այլ պետք է
 լավ չորացնել և ապա հագցնել, վորով-
 հետև շորը հագցնելիս յերեխայի մար-
 մինը շուտով պաղում է:

ԲԺ. Գ. Սարգսյան

Արտատպ. Առողջ. թերթից:

Գ.

Ասիական Հնդսխս

(Холера)

Հիվանդության նշանները իսկույն
 չեն հայտնվում: Վարակման վայրկեա-
 նից մինչև հիվանդանալը յերկու,
 յերեք ուր է անցնում: Յերեք ուրից հե-
 տո հանկարծ սկսվում է հիվանդու-
 թյունը լուծողությամբ, դողով, գլխի
 պտույտով և կատարյալ ուժասպառու-
 թյամբ: Քանի գնում է, լուծողությունը
 ավելանում է: Կզկզանքի տեսքը փոխ-
 վում է ըրնճաջրի նման: Ախորժակը
 իսպառ անհետանում է, ծարավը տան-
 ջում է հիվանդին, լեզուն չորանում և
 կեղտոտվում, փորը ներս և ընկնում
 և մկանները թուլանում են: Սրան հե-
 տևում է սոսկալի տանջող փսխողու-
 թյունը, վոր խիստ վտանգավոր է սրտի

գործունեության թուրության համար-
խակ յերբեմն եւ պատճառ եւ լինում մի-
գարգիլության: Հիվանդի ձեռքերը եւ
վոտքերը սառչում են: Շրթունքները
ներկված են ծիրանե կապույտ գույնով,
խորը փոս ընկած աչքերի տակից դուրս
են յերևում կապույտ շրջանները: Հի-
վանդը ույժ չունի բարձր խոսելու եւ
դժվարությամբ եւ շունչ քաշում: Այս
գրությունը յերկար չի տևում, յերկու
որում վախճան եւ ստանում, մեկ, յերկու
որում հիվանդը կամ մահանում եւ կամ
սկսում եւ առողջանալ: Առողջանալուց
հետո, հիվանդությունը կամ կրկնվում
եւ կամ բարդանում, որինակ՝ թոքերի,
յերիկամունքների միզապարկի, աղիք-
ների եւ ուրիշ բաների բորբոքումն եւ
ստանում:

Նախապաշտպանող միջոցներն են՝
վերին աստիճանի մաքրություն շորե-

րի, ճերմակեղենի, սենյակի ողի եւ
այլնի նկատմամբ: Ուշադրություն
դետք եւ դարձնել վոր կերակրանյու-
թերը լավ հատկություն ունենան, լի-
նեն դյուրամարս եւ թարմ: Հում ջուր
եւ անյեւիկաթ չ'տալ: Առհասարակ հում
կերակուր չտալ հիվանդին:

Բժշկությունը սկսվում եւ նրանով,
վոր աշխատում են լուծողություն մեղ-
մացնել: Այս նպատակով հիվանդին
տալիս են որը 3 անգամ 15-ական կա-
թիլ ամիոնի ոգեթմրոց (tinctura opii)
կամ 2 ժամը միանգամ կես-կես գրամ
մաքուր ամիոնի փոշի: Այնուհետեւ
տալիս են տաք թեյ կարմիր գինով,
բուլիոն, գլինտվեյին: Հիվանդին շփում
են տաքացրած ձեթով եւ աշխատում են
տաք ծածկել: Այս դեպքում հիվանդին
տալիս են սեվ սուրճ, գինի, քափուր,
շամպանյայի գինի: Ույժերը ամրաց-

նելու համար տալիս են կաթ, բուլիոն,
պաքսիմատով (սուխարով) թանձր
արգանակ, թերխաշ ձու: Շատ և ոգնում
լողարան 29—31 աստիճան, կաշուի
տակներսրակել աղի բնախոսական լուծ-
ուածք, այն 0,7⁰/₀ աղի: Այն լուծ-
վածքը ներսրակում են գոլ դրությամբ
1—4 բաժակ, յուրաքանչյուր անգամ
³ թեյի բաժակ:

Յե. Ռարով

Արտատպ. տնային բժշկությունից

Պ.

Կոռս (մազով)

(Мозоль)

Կոշտի սիրած տեղը համարվում է
միայն վոտները, վոր կարելի չի
միայն կոշիկների հուպ տալով բացա-
տրել:

Կոշտի բժշկությանը ոգնում է
միայն՝ հեռացնել հուպ տվող կոշիկներ,

տաք վաննա դնել և արմատից հա-
նել:

Ամենից լավ և փորձված դեղը հե-
տեյալն է՝ խորոված սոխը պահել
քացախում և ապա սոխի մի շերտ դնել
կոշտի վրա և կապել: Ավելի հարմար
է գիշերով անել: Այսպես շարունակել
մի քանի գիշեր և ամեն անգամ փափ-
կացրած մասը հեռացնել ու յերբ բո-
լորովին քոքից հանվի, խորացրած տե-
ղում դնել բամբակ և կապել մինչև
վոր միսը մի քիչ պնդանա:

յե.

Սիճիլիս

Սիֆիլիսը արյան ու ամբողջ կազ-
մվածքի հիվանդությունն է և վարակ-
ման հետևանք:

Սիֆիլիսը սկզբում յերևում է գլխա-
վորապես արտաքին սեռական գործա-
րանքների վրա:

Այդպիսի հիվանդությունն ունեցողը արդեն ամբողջ կազմուածքով հիվանդ է:

Սեռական մերձավորությունից դուրս ել կարելի չէ սիփիլիսով վարակուել, որինսակ — սիփիլիսոտ յերեխային ծիծ տալիս վարակվում է ծիծը և ընդհակառակը՝ սիփիլիսավոր հիվանդի ծիծը ուտելուց յերեխաների շրթունքներն են վարակվում:

Սիփիլիսով վարակվել կարելի չէ նաև ծաղկի պատվաստից, համբույրից, սիփիլիսոտի ճերմակեղենից, գդալից, և մեկ ամանից ուտելուց:

Շատ անգամ պատահել է նույնպես, Վոր սիփիլիսոտ ծննդկանի գննելիս մանկաբարձը և բժիշկը սիփիլիս են ստացել մատների վրա:

Վարակված տեղում խոց և գոյանում, վորը յերկու կամ յերեք շաբթից հետո սկսում է կոշտանալ: Իսկ

մերձավոր ավշագեղձերը-խուլերը ուռչում են:

Յեթե խոցը կրծքի վրա չէ, կոշտակի գեղձերն են ուռչում. յեթե շրթունքի վրա չէ կամ բերանի մեջն է — վզագեղձերը, իսկ յեթե սեռական գործարանների վրա չէ — աճուկները:

Այս գեղձերը սխտուի կամ վայրի կազնի մեծությունն ունեն, շատ չեն ցավում և կլոր ու շարժական են:

Կոշտացած խոցը արդեն սիփիլիսի առաջին նշանն է:

Վարակման սկզբից 4 — 6 շաբաթ անցած մարմինը դուրս է տալիս, յերևում են մուլթ կարմրավուն բծեր, վորոնք վոչ ցավ են ունենում և վոչ էլ բոր են գալիս:

Այնուհետև շքում գոյանում են տափակ, կլոր, լայն գորտնուկներ ու պապուլներ: Բերանի և կոկորդի մեջ

գոյանում են փոքրիկ՝ տասը կոպեկանոցի չափ սպիտակագույն բշտիկներ, վորոնք չափազանց վարակիչ են: Այդ ժամանակ ձայնն ել փոխվում է: Գլխի վրա, մազերի մեջ առաջանում են մոմագույն քոսեր (իմպետիկս): Հաճախ բոլոր գեղձերն ուռչում են: Այս հիվանդությունը տարիներ տևում:

Յեթե իր ժամանակին նրա զարգացման առաջը չառնվի, վոսկորներն ել կսկսեն ուռչել ու փտել, քիթը կը թափվի, ներքին գործարանները կուռչեն, կավերվի նաև վորդածուծը և գըլխի ուղեղը, իսկ այդ բոլորի հետևանքը-կաթված, կուրություն, ու խելագարություն ե լինում:

Բայց առավել մեծ դժբախտությունն այն է, վոր այդ հիվանդությունը ժառանգաբար անցնում է այն

մարդկանց սերունդին, վորոնք վատ են բժշկված, թույլ թոքեր ունեն, վատ են սնված և առանց բժշկի թույլավուն: Թյան են ամուսնացած:

Սիֆիլիսը ժառանգաբար անցնում է կամ միայն հորից կամ մորից և կամ յերկուսից միաժամանակ:

Սիֆիլիսոտ ծնողների զավակները միշտ սիֆիլիս չեն ունենում, վորովհետև համապատասխան բժշկությունը և յերկար ժամանակի ազդեցությունը մեծ դեր են խաղում այդ դեպքում:

Վորքան հին լինի ծնողների սիֆիլիսը, նույնքան թույլ չափով կանցնի նա մատաղ սերնդին:

Սիֆիլիսի փոխանցումը ամենից շատ վտանգավոր է հիվանդության առաջին յերեք տարիներում, հետո նրա յուր թուլանում է՝ մեկին 5, մյուսին 15 կամ 20 տարուց հետո:

Յեթե ծնողների սիրֆիլիսը նոր է, դրանից առաջանում է վիժումն, այսինքն որպակաս ծնունդ. յերեխան աշխարհ դալուն պես սիրֆիլիսի նշաններ է ունենում. նա իր կյանքի առաջին իսկ շաբաթներում մեռնում է:

Հաջորդ ծննդաբերությունները տալիս են թեև ըստ յերեւոյթին առողջ պտուղներ, բայց դրանք մեծ մասամբ անսակաւնի հասակ-չհասած մեռնում են: Վերջապես սիրֆիլիսի ժառանգաբար փոխանցումը դադարում է:

Սակայն պետք է գիտենալ, վոր առողջ յերեխաներ ունենալը դեռ ապացույց չէ, թե հիվանդ ծնողները բոլորովին ազատված են սիրֆիլիսից:

Սիրֆիլիսի ամենալավ դեղը սնդիկն է, յեթե միայն բժշկությունը հմտությամբ է կատարվում:

Այն եւ պետք է գիտենալ, վոր սիրֆիլիսը կարող է նորոգվել, այսպես՝ մի կամ մի քանի առողջ զավակներ ունենալուց հետո, հանկարծ նորից ծնվում է սիրֆիլիսոտ յերեխա կամ տեղի է ունենում վիժումն:

Հղության ժամանակ մայրը վորքան վաղ վարակված լինի, նույնքան ծանր կերպարանք կը ստանա յերեխայի սիրֆիլիսը:

Յեթե մայրը սիրֆիլիս ստացել է հղության ժամանակամիջոցի առաջին կեսում, այն ժամանակ ծննդաբերությունը վերջանում է վիժումով:

Յեթե սիրֆիլիսոտ յերեխան հորից է վարակվել նա յերբեք չի կարող մորը վարակել. հետեւաբար մայրը անյերկյուղ կարող է ծիծ տալ յերեխային:

Շատ վնասակար բան է ծանոթի,

ազգականի և առհասարակ ոտարի յերեխային ծիծ տալը:

Ժառանգական սիֆիլիսի մի քանի նշաններն ուղղակի կախումն ունեն սիֆիլիսական թուլնի ազդեցությունից: Առանց դժվարության կարելի յի խմանալ. վոր յերեխան սիֆիլիսոտ ծնողների պտուղն է:

Ժառանգական սիֆիլիսի մյուս ասակը առաջացնում է սննդառության ալ և ալ խանգարումներ, վորոնք լի նում են նաև արկոհոլիզմի ու բարակացավի ժամանակ:

Ժառանգական սիֆիլիս ունեցողները միշտ հիվանդոտ են, հակումն ունեն րախիտի, գեղձախտի, սակավարյունության, բարակացավի — (տուբերկուլեոզ), ուղեղային թաղանթի բորբոքման և ալ հիվանդությունների:

Ֆիզիքական և մտավոր զարգացման տեսակետից ել այդպիսիները հետ են մնում, դանդաղ են մեծանում, ատամները ուշ են հանում, ամսականը ժամանակին չի բացվում, յերեսի և գլխի մազերը նոսր են բանում-մեկ խոսքով նրանց կազմվածքը շատ թույլ և զարգացած լինում:

Յեթե արգանդի մեջ սաղմը սիֆիլիսով վարակված է, հղիության յերրորդ — յեոթներորդ ամիսներում վիժումն է լինում: Յերեմն ել կենդանի յերեխա յի ծնվում, բայց նա ել ծածկված է լինում բծերով ու վերքերով և իր ծնողների հանցանքի պատճառով շուտով մեռնում է:

Նորածին յերեխաների վրա սիֆիլիսը յերևում է առաջին յերեք ամիսների ընթացքում: Այդ տեսակ սիֆիլիսի գլխավոր նշաններն են՝ 1. դեմքի դեղ-

նածուլթյուն—գունատություն. համար-
յա դժվար բժշկվող և յերբեմն արյու-
նախառն հարրուխ: 2. Վռաների, հե-
տին անցքի, կզակի վրա և նրբանի
մոտերքը դուրս ե տալիս, այսինքն
ցան և յերևում: Այդ դուրս տվածները
յերբեմն խոցեր են դառնում. շրթուն-
քների և բերանի անկյունները ճաթ-
ձթում են. 3. Ափի ու գարշապարի
վրա թարախոտ բշտիկներ են գոյա-
նում, կաշին կպճվում ե, հաճախ ձեռ-
քի վոսկորներից մեկի վրա ուռույցք
ե յերևում, այնպես վոր յերեխան
ստանում ե կաթված — (կեղծ կաթ-
ված):

Ժառանգական հին սիֆիլիսի, այս-
ինքն գումմային յերրորդ աստիճանի
ժամանակ, նշանները յերևում են 2—20
տարեկան հասակում. այդ դեպքում
վնասվում են սրունքները, վորոնք

սկզբում գիշերները սաստիկ ցավ են
պատճառում, ապա հետզհետե քմքի և
քթի վոսկորների վրա: Լեարդն ու ձը-
վերը ուռչում են, առաջ ե գալիս խը-
լուլթյուն, աչքերի և ատամների ցավ
և նեարդերի խոնգարումն:

Սիֆիլիսոտի ատամները լինում են
մանր, նեղ և կարճ ու իրարից հեռու-
հեռու շարված, մեջերը բաց: Վերի ա-
տամների վարի ծայրերը կիսավունի
նման կտրվածքներ են ունենում:

Յերբեմն ատամները փտում են, այս-
ինքն կտրիչ ատամների վրա գոյա-
նում են փոսիկներ և ակոսածև քերծ-
վածքներ. սակայն այս նշանները կա-
րող են լինել և ուրիշ հիվանդություն-
ների ժամանակ:

Յեթե հիվանդի մոունդը վատ ե և
լյարդը կամ մյուս գործարանները ար-
դեն ֆլաաված են—դրա հետևանքը կը
լինի չարաչար տանջանք և վերջը—մահ:

Բժ. Ա. Բուդուդյան

Ասամնաբուծության պատմություն

Քրիստոսից մի քանի դար առաջ, հոգևորական դասը բացի յուր հոգևոր պաշտոնից, պարապելիս է յեղեկ և բժշկությամբ:

2700 տարի Քրիստոսից առաջ, Յեզիպտոսում տարածված էր բոլոր ճյուղերից առավել բժշկությունը և յեղեկ են մասնագետներ՝ աչքի, ականջի, ստամոքսի և ատամների:

Բժշկության հիմքը դնող յեղեկ է Քրիստոսի Հիպոկրատ, վոր քրիստոսից 400 տարի առաջ բժշկեց հիվանդոտ լնդերը, շինեց ատամների հանող մեքենաներ, փոս ընկած ատամները լքեցրեց, կոտրած կզակներ դարմանեց, աշխարհին ծանոթացրեց՝ սաղմի մեջ կազմվող ատամի նախնական ծիլը և այլն:

Հիպոկրատի մահից 600 տարի հետո, նրա աշակերտներից Իտալացի Կալեն թեթև սրբազրություններ արավ ատամնային ջղաթելիկների գիտություն և ատամնաշարեր շինելու արվեստի մեջ:

Սրանից հետո վոչ մի առաջադիմություններ չեղավ աշխարհի մեջ մինչև միջին դար: Արաբ Ապյուլ Բասիս, 1050 — 1122 թվականներին, գտնում է ատամների ջղերը՝ կարմրած յերկաթ թելերով այրելու միջոց: Կի-տը Շուլ-յիսը՝ գտնում է պարզ թմրացնող դեղեր: Իտալիայի մեջ 1329 թվին հիմնում է առաջին բժշկական ակադեմյա: Այն ժամանակվանից մինչև 16-րդ դարը, ատամնաբուծության արվեստը սկսում է զարգանալ:

16 — 17 դարում գերմանացիք կարողացան բավականին ոգտակար հան-

գիտանալ գիտական աշխարհին, սակայն չը կարողացան գրավել այն առաջնությունը, վոր խլեց Թրանսիացի Փարենն, իր կարևոր գյուտերով: Նրա գյուտերն յեն՝ խսրանում (cauterization), խտանը (obturator) և ատամների վերադետեղում (explantation): Այս շքանունը դուրս. Հայկմորը կզակի ողախոռոչների և ատամների հարարերության գյուտը արեց, վորին և տըրվեցավ նրա անունը:

Ուրիշները հնարեցին արհեստական ատամների բաղադրություն, մեղրամոմի կաղապարներ և այլն:

Գիտության այս աստիճանական զարգացումը հսկայական համեմատությունների հասավ 18-րդ դարում, վոր յեղավ ատամնաբուժության վոսկեղարը, շնորհիվ Ֆրանսիացի Փիեր Փոշառի: Ֆոշառը ատամնաբուժության հիմնա-

ղիքը կամ բուն իսկ ատամնաբուժությունն է: Նա շինեց ատամներ քաշելու, փորելու, լցնելու գործիքներ. հիվանդոտ ատամների դարմանումը գիտական մետոդներով, կոտրած կզակները ուղղեց, գտավ ատամի ջղատունը, բացատրեց ատամների աճման յեղանակը. շինեց բազկաթոռներ և ատամնաշարեր, արգելեց հանել յղի կանանց ատամները և ատամնաբուժությունը դատեց բժշկությունից: Սրանով վերջ դրվեց սափրիչ-ատամնաբույժներին: 1728 թվին գրեց՝ Վիրաբույժ Ատամնաբույժ գիրքը, վորը թարգմանվեց բոլոր լեզուներով և մեծ ընդունելություն գտավ:

Ամերիկահայ բժ. Մ. Կ. ՍՐԱՊՅԱՆ

Արտ. «Հանրագիտակ» 1926 թ.

ԲԺՂԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՅՈՒՏԵՐ

Քաղցկեղը (Ռակ) բժեկելու դեպք

Լենինգրադի կնարուժական ընկերությունն նիստում պրոֆ. Սկորբանսկին զեկուցեց քաղցկեղի բուժման դեպքի մասին ռադիի սրսկման ոգնությունը: Վերքն ախքան հնացած և յեղել, վոր գավառական բժիշկները հրաժարվել են անդամահատություն կատարելուց: Հիվանդ կնոջը փոխադրել են Լենինգրադ: Վերքը գոյացել և սեռական որգանների շրջանում և տարածվելով բռնել ամբողջ կոնքը, ախպես վոր պրոֆ. Սկորբանսկին հնար չի գտել անդամահատելու:

Պրոֆ. Սկորբանսկին փորձում և մի այլ միջոց: Նա վերցնում և ռադիով լիք ապակյա փոքրիկ խողովակները (տրուբոչկի) և ուռուցքի մեջ դնում: Հետևանքը — ապշեցուցիչ. ուռուցքն անհետանում և, վերքն առողջանում, հիվանդն իրեն զգում և հիանալի, քաշըն ավելանում: Բժշկություն համար գործածված ռադին ձեռք և բերված գիտությունների ձեմարանի ռադիական ինստիտուտից:

Կյանքի նոր ելիֆսիրը:

«Elixir Vitae»

Դոկտոր Նոտտ ալ-Բերկենհեդը բերնական բժշկական թերթում մանրամասն խոսում և բժշկական մի նոր պրեպարատի մասին, վորը, նրա կարծիքով, հսկայական ծառայություն պիտի մատուցանի մարդկությանը:

Ինչպես հայտնի յե, մինչև այժմ մեծ աջողությամբ սրսկում եյին մարդկանց վահանաձև գեղձերից ստացվող եքստրակտը, տիրոլիդինը, վորը մեծ քանակությամբ հիվանդության առաջնառնում եր: Այժմ նույնպիսի մի պրեպարատ պատրաստվում է մանգանից (մարգանեցից), վորի սրսկումով բժշկվում է ուղեղի մեներգիտը, պոդագրան (վոսկրային հոգերի բորբոքումը), ստամոքսային խոցը, անգինան և աղիքների հիվանդությունը:

Ինչպես հայտնի յե, մանգան գտնվում է մեր կերակրի, ինչպես և կենդանի գրեթե բոլոր տեսակի բջիջների մեջ:

Բժշկության այս նոր մեթոդի հետևանքները չափազանց մեծ են և գրեթե անմիջական: Թուլակազմ և դանդաղաշարժ յերեխաները, վորոնք հա-

կառակ արևի լույսի, լավ մենդի և դյուլական առողջարար կլիմայի ու բնակարանի, դարձյալ չեյին առողջանում, մանգանի այս պրեպարատի կիրառումից հետո անմիջապես բուժվում են վերոհիշյալ հիվանդությունից:

Դոկտոր Նոտտ ալ-Բերկենհեդը խորհուրդ է տալիս չգործածել այս պրեպարատը առանց բժշկի ղեկավարության:

Ամերիկացի մի բժեկի նոր գյուտ:

Պարիզի ամերիկական թերթերին Նյու-Իորքից հետաքրքիր տեղեկություններ են տալիս դ-ր Ռոբերտ Գրեների մի նոր դյուլտի մասին, վորը մեծ հեղաշրջում է մտցնում բժշկական աշխարհում: Բոլոր տարափոխիկ հիվանդությունների պատճառը յեղող զանազան բացիլներն ու բակտերիաները

ահա մի քանի տասնյակ տարի յե, վոր մանրամասն ուսումնասիրվում են բժիշկների ու գիտնականների կողմից: Այդ բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավոր է դառնում շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ մանրիկ եյակները, ինչքան ել մանր և պարզ աչքի համար անտեսանելի յեն, այնուամենայնիվ շնորհիվ միկրոսկոպի՝ տեսանելի յեն դառնում իրենց կյանքի բազմաթիվ ձևափոխություններով:

Դ-ը Գրենը այժմ մի միկրոբ և գտել, վորին տեսնելը գոնե մինչև այժմ գոյություն ունեցող ամենակատարելագործված միկրոսկոպների միջոցով անգամ հնարավոր չի լինում: Նորագույն այդ միկրոբը այն դարմանալի հատկությունն ունի, վոր վոչնչացնում է մնացած բակտերիաներին: Դ-ը Գրենը ինքը իր ձեռքի տակ յեղած միջոցներով

այդ միկրոբը չի կարողանում տեսնել, սակայն նրա ներկայությունը նա ապացուցում է այն ազդեցությամբ, վոր նա թողնում է շրջապատի վրա:

Վիսամիճների նշանակությունը կյանքի մեջ

Սննդառության մասին ունեցած մեր կարծիքների ու գիտելիքների մեջ մեծ հեղաշրջում առաջացրեց այսպես կոչվող վիտամինների ուսումնասիրությունը, վորոնք մինչև այժմ հայտնի յեն գիտական աշխարհին միմիայն իրենց ազդեցությամբ: Վիտամինները նոր հայտնաբերված նյութեր են մեր սննդի մեջ, վորոնք մեր կյանքի համար չափազանց անհրաժեշտ են և վորոնց պակաս գործածությունն առաջացնում է մի շարք հիվանդություններ մեր որգանիզմի մեջ: Վիտամին

բառն առաջացել է լատիներեն «vita» — կյանք բառից:

Դիտանականները մինչև այժմ ճանաչում են յերեք տեսակի վիտամին. A վիտամինը գտնվում է կարագի, ձվի դեղնուցի և մանավանդ մեծ քանակությամբ «ձկան յուղի» մեջ (բրաձուկի լյարդից ստացված յուղը, վորը գործ են ածում գիրանալու համար): A վիտամինի պակաս քանակությամբ գործածությունն առաջ է բերում տրամադրություն՝ շուտով հիվանդանալու «անգլիական հիվանդությամբ» (ոսխիտ), տուբերկուլյոզով և այլ նման հիվանդություններով:

B վիտամինը գտնվում է բրնձի և հացահատիկների կեղևի մեջ այն յերկրներում, վորտեղ մեծ քանակությամբ գործ են ածում բրինձ չափազանց տարածված և «բերիբերի»

(քուն առաջ բերող) կոչվող հիվանդությունը: C վիտամինը գտնվում է թարմ պտուղների և բանջարեղենի մեջ, և այն մարդիկ, վորոնք բոլորովին չեն սնվում պտուղով և բանջարեղենով, նրանք շուտով հիվանդանում են լնդախտով (цинга):

Պրոֆ. Պլիմմերը և դ-ր Ռոդետալը վերջերս լոնդոնում մի շարք փորձեր կատարեցին, վորոնք ցույց տվին վիտամինների չափազանց կարևոր նշանակությունը կյանքի համար, քան մինչև այժմ կարծում էյին: Փորձերը կատարվեցին 12 սպիտակ և 12 սև յերեք-որսկան աքլորների վրա, վորոնց սովորական սննդի վրա սկսեցին ավելացնել և պակասեցնել A, B և C վիտամիններով հարուստ զանազան յուղեր, նրանք վերցրին A վիտամինի համար ձկան յուղը, B վիտամինի

համար՝ խաղողի գերտի եքստրակտը և
 C վիտամինի համար՝ կիտրոնի կամ
 նարինջի հյութը: Յեվ ինչ ցույց տվին
 փորձերը. յերբ պակասեցնում եյին
 վիտամիններով հարուստ նյութերի
 սննդատվությունը, աքլորները թուլա-
 նում եյին և ընդախտ հիվանդության
 նշաններ եյին յերևում, և ընդհակառա-
 կը, յերբ սննդառությունը հասցնում
 եյին նորմալ քանակության, կենդա-
 նիները դարձյալ նախկին առողջ դրու-
 թյան եյին հասնում:

Զափազանց մեծ է վիտամինների
 նշանակությունը կենդանական աշ-
 խարհի համար, և ուսումնասիրություն-
 ները շարունակվում են:

Ինչքան յեվ յերբ է անում վառդը

Յերեխան ծնվելիս միջին հաշվով 50
 սանտիմետր յերկարություն է ունե-

նում և առաջին տարին նա աճում է
 20 սանտիմետր: Յեթե նորածին յերե-
 խան այդպիսի արագությամբ աճեր,
 մինչև իր չափահաս դառնալը 140 մե-
 տր յերկարության հասակ ունեցող
 մի հսկա կը դառնար: Սակայն այդ-
 պես չի պատահում, մարդու աճման
 արագությունը տարեցտարի պակա-
 սում է: Մեկից յերկու տարեկան հա-
 սակում յերեխան միջին հաշվով աճում
 է 9 սանտիմետր, յերրորդ տարվա ըն-
 թացքում՝ 6 սանտիմետր: Սնդկիացի
 մի մարդարան պնդում է, վոր դրանից
 հետո յեւ մարդու աճման յերկարու-
 թյունը հասնում է 3,5 սանտիմետրի:
 16 տարեկանից հետո տղամարդկանց
 և կանանց հասակի աճման մեջ տար-
 բերություն ենք նկատում: Կինը 17
 տարեկան հասակում աճում է 3 սան-
 տիմետր, 18 տարեկանում՝ 2 սանտի-

մետր, 19-ում՝ 1,5 սանտիմետր և 20 տարեկան հասակում՝ 1 սանտիմետր: Տղամարդը 25 տարեկանից առաջ չի հասնում իր հասակի կատարյալ յերկարության, սակայն վերջին տարիներին ընթացքում նա աճում է միմիայն տարեկան կես սանտիմետր: Աղջկերբը առանձնապես աճում են 16—17 տարեկան հասակում, յերբ ավելանում է զգալի կերպով նաև նրանց քաշը. սակայն տղամարդիկ աճման մաքսիմումին են հասնում իրենց 24. տարեկան հասակում: Տղաները ուժեղ են դառնում իրենց ծննդյան որից մինչև 11 տարեկան հասակը:

Մարդու մարմնի զանազան մասերն էլ զանազան արագությամբ են աճում: Որինակ վոտները յերրորդ տարվա վերջում յերեք անգամ ավելի յերկար յեն, և յերբ արդեն մարդս դադարում

է աճել, նրանք 5 անգամ ավելի յերկար են լինում: 10 տարեկանից առաջ վոտի թաթն ու գլուխը միևնույն յերկարությունն ունեն, իսկ 10 տարեկանից հետո, վոտը ավելի յերկար է, քան գլուխը: Մարդու մազերը որական աճում են 0,04 սանտիմետր. սակայն ամեն մի մազ միջին հաշվով ապրում է վեց տարի, վորից հետո նա թափվում է: Աչքերի արտևանունքները անդադար աճում են, սակայն նրանց կյանքը միայն 4—5 ամիս է տևում, վորից հետո նրանք թափվում են: Յեղունգները շատ արագ են աճում. մատի մի յեղունգը նորոգվում է մոտ 4 ամսվա ընթացքում: Նորածինի ուղեղը կշռում է մոտ 280 գրամ, սակայն չափաս տղամարդու ուղեղը կշռում է մոտ 3 ֆունտ, իսկ կնոջը 2,75 ֆ.:

ՄԻՏԻ ԲՆՈՒՅԺԱՆ ԸՆԴ ՎԵՐՆԵՐ

Բժշկական նորութիւնները, վոր պատերազմի ընթացքում շատ դանդաղ եյին յերևան գալիս, ներկայումս հսկայական քայլեր են անում:

Այս կարգին են պատկանում և պրոֆեսոր Արքատի ու բժիշկ Յակոբսոնի նոր նվաճումները սրտի ուսումնասիրութեան գործում:

Վերջին ժամանակներում բժիշկ և ռադիո-մասնագետ հետախույզներ առանձնապէս զբաղված են սրտի բարախման ձայնի ուսումնասիրութեամբ ռադիոյի միջոցով:

Յեւ ահա պրոֆ. Արքատին (Հ. Ամերիկ. Սեն Լուի քաղաքի համալսարանից) աջողակ է սրտի զարկի ձայնը ռադիոյի միջոցով լսեցնել տալ ավելի քան 800 վերտ տարածութեան վրա:

Նույն հարցի շուրջն ուսումնասիրութիւններ կատարող գերմանացի բժիշկ Յակոբսոնը կարողացել է մոր արգանդում սնվող մանկական սրտի բարախումը լսելի դարձնել ավելի մեծ տարածութեան վրա:

Այսօր ամերիկական բժշկական ընկերութեան դահլիճում գրված է մի այնպիսի ռադիո գործիք, վորի միջոցով սրտի արատ (porok сердца) ունեցող հիվանդի սրտի բարախման ձայնը կարող են լսել միաժամանակ 740 բժիշկներ զանազան հեռավոր ամերիկական քաղաքներում:

Այդ գյուտն առանձնապէս հոշակավոր է նրանով, վոր սովորաբար սրտի արատ անվան տակ վաղ մասնագետ բժիշկները խառնում են սրտի զանազան քաղցրի հիվանդութիւնները, չկարողանալով նուրբ կերպով բնորոշել

հիվանդութեան վայրերը. այն ինչ մասնագետները սրտի սահմանները բնորոշելուց հետոյ (վոր շատ հեշտ է) իրենց հմուտ լսողութեամբ, սրտի զանազան մասերի և գլխավոր արյունատար անոթների զարկի ձայների ամենաանշան փոփոխութիւններից կարողանում են բնորոշել սրտի արատի իսկական վայրը:

Այս գիտագնոզի հաստատ փորձման համար հիվանդները շատ անգամ ստիպւած են լինում հեռու քաղաքներ գնալու մասնագետ բժշկի հետ խորհրդակցելու այն ինչ՝ այսօր կարելի չէ մի քանի զանազան քաղաքներում գտնվող մասնագետների հետ խորհրդակցել առանց մեծ դժվարութիւնների:

Ռադիոլմի գազի հալմութիւնը

Հայտնի չէ վոր ուղիով շարունակ իրենից մեծ քանակութեամբ ուղիով գազ կոչվող եներգիա յետ արտադրում. դա հենց այն եներգիան է, վորից մեծապես ոգտվում են ներկայումս Յեկրոպայի բժշկական մեծ ինստիտուտներում: Հայտնի չէ նույնպես, վոր այդ գազը դուրս ցնդելով ուղիովից, իզուր կորչում է ողի անհուն տարածութեան մեջ:

Սակայն Լոնդոնի Միդլսեքս հիվանդանոցում վերջապես աջողել է կիրառել մի սպարատ, վորը իր մեջ է հալաքում ուղիովից յեկնող այդ գազը, մաքրում, խտացնում է և ապա տեղավորելով մազի հաստութեամբ շինված խողովակների մեջ, գործադրում է նույն նպատակներով, ինչպես ուղիով:

Այդ բարակ և մանր խողովակները վորոնք իրենց ձևի համար կոչվում են «սերմեր» և վորոնք իրենց մեջ պարունակում են ռադիումի մի զոգա՝ Միդլսթերս հիվանդանոցում պատրաստվում և ցրվում են զանազան հիվանդանոցների, նրանց ազդեցությամբ աջողությամբ բժշկվում և քաղցկեղ (ռակ) հիվանդությունը:

Թոքերի բորբոքման դեմ

Հենց վոր յեղանակները ցրտում են, չափազանց հաճախակի յեն դառնում թոքերի բորբոքման դեպքերը թե թույլ կուրծք ռանկոդ յերիտասարդների և թե ծերերի մեջ: Սկզբում բորբոքումը բժշկները կարծում էին, թե արդ հիվանդությունը բացիլար ծագումն ունի. սակայն այժմ եքսպերիմենտալ բժշկականությունը, գտել և թոքերի

բորբոքման միկրոբները, և ամեն կերպ միջոցներ են վնտրում այդ միկրոբների դեմ կովելու համար: Իտալացի Լեոնարդո Տոմարկինը գտել և մի միջոց այդ միկրոբների դեմ, վորը և նրանունով կոչվում և «Տոմարկինի անտիմիկրոբում»: Այս նոր պրեպարատի առավելությունը կայանում է նրանում, վոր ազդում և վոչ միայն միկրոբների առաջացրած հետևանքների վրա, այլ նենց իրանց միկրոբների վրա: Փորձերը ցույց են տվել, վոր թոքերի բորբոքման նախկին մահացության 40 տոկոսն այժմ իջել է 4 տոկոսի: Այդ պրեպարատի ստուգումները այժմ կատարվում են Լանդոնում:

Բաղցկեղի (Ռակի) դեմ

Բազմաթիվ են պայքարի նոր միջոցները այս սարսափելի հիվանդության

դեմ: Վորոնուհներն շարունակվում են: Սակայն մեծ ազմուկ և հանել յապոնացի պրոֆեսոր Մացուշիտայի նոր գյուտը, վորը սկսում է լայն կիրառություն ստանալ բժշկական աշխարհում: Մացուշիտան այդ նոր դեղը պատրաստում է չինական հայգումզ բույսից: Մկների և ճագարների վրա կատարած նախնական աջող փորձերից հետո, այժմ նույնն անում են մարդկանց վրա. փորձերը հիանալի հետևանքներ են տվել:

Պասվաս սուբերկուլյոզի դեմ

Պարիզի Պաստորյան ինստիտուտի բժիշկներից դր. Կալմեթը, վորը տարիներով ուսումնասիրել և տուբերկուլյոզը, կենդանիների վրա փորձեր և արել թորախտի դեմ նրանց պատվաստելու համար: Դր. Կալմեթին աջողվել է

դտնել մի շիճուկ, վորով հնարավոր է մատաղ կենդանիներին պատվաստելով պաշտպանել նրանց այդ հիվանդության դեմ: Այս շիճուկը կազմված է մի տեսակ բացիլներից, վորոնք անհնաա լինելով մարդկային որդանիզմին, միաժամանակ արգելք է հանդիսանում տուբերկուլյոզի միկրոբների զարգացման: Ծնվելուց մի քանի ուր անց յերեխաներին պատվաստելով թորախտի դեմ պաշտպանած կը լինեն: Ցանկալի յե, վոր բոլոր թորախտավոր մայրերի յերեխաները այս ձևով պատվաստվեն, դրանով արդյունքը ավելի ակնհայտ կը լինի: Այս պատվաստի շիճուկը կոչվում է բժշկական լեզվով B. C. C. բացիլներ: Վորեք բժիշկ, վոր ցանկանում է կատարել նման փորձեր, կարող է դիմել Պաստորյան

ինսիտուտին և ստանալ նմուշ ալդ շիճուկից:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԵՏՏԱԽԱՆԺՈՐ (Картофель)

ԳԵՏՏԱԽԱՆԺՈՐԻ ԱՎԱՏՄՈՒՔՅՈՒՆ

Գետնախնձորը Հարավային Ամերիկայի Փերուի և Զիլիի Անդյան լեռնաշղթաների բուսական աշխարհից և առաջացել:

Տեղադրները վաղուց արդեն մշակում էին այս բույսը «պապաս» անվան տակ:

Գետնախնձորի հնության մասին շատ թեր և դեմ կարծիքներ կան: Յեվրոպա յե բերվել 16-րդ դարում իսպանացիներին ձեռքով:

Սկզբում գետնախնձորը մշակվում էր միայն Յեվրոպայում՝ ապա ժամանակի ընթացքում տարածվել և աշխարհի չորս կողմ: Այս անդադար գնդարմատը, վոր դարդարում և թե բանվորի և թե բուրժուայի սեզան, այսօր աստիճանաբար և մեծ քայլերով զարգանում և ու տարածվում: Յեվրոպայում՝ առաջին անգամ Գերմանիայում կարևոր յե-րդի ժամանակ սկսվեց նրա պաշտպանության տակ մեծ ծավալ ստանալ և առատությամբ մշակվել:

Ֆրանսիայում առաջին անգամ Վոժի ագարակատերերը սկսեցին մշակել, բայց դժբախտաբար նրա մշակումը շուտով դադարեց մի զիպվածի պատճառով: Դյուղացիները հասկացողություն չունենալով գետնախնձորի քիմիական բաղադրության մասին, անուշադրությամբ գնդիկները թողած են լինում

արևի տակ, վորից առաջանում է «Մորմին» (solahine) կոչված հիվանդությունը: Այդ հիվանդությունը պարունակում է իր մեջ մի տեսակ թույն, վորից ժողովուրդը թունավորվում է: Բարեբախտաբար Ֆրանսիայում ասլրում էր Անտուան-Ոգյուստեն Պարմանթիե անունով մի գյուղատնտես — ագարակատեր, վոր քննելով բույսի քիմիական բաղադրությունը, գտնում է նրա հիվանդության պատճառները և միջոցներ ձեռք առնում նորից մշակելու: Այս անգամ մենակ նա յե մշակում: Այդ միջոցներում Ֆրանսիայում թագավորում էր Լյուդովիկոս 16-րդը, վորի անփույթ և անհոգ կառավարության պատճառով առաջանում է մեծ սով:

Պարմանթիենը յուր խելացի խորհուրդներով համոզեց Լյուդովիկոսին,

վորպեսզի նա հսկի և պաշտպան հանդիսանա գետնախնձորի մշակությանը, վորպեսզի գոնե վորք չափով՝ կարողանան ազատել ժողովրդին սովամահ լինելուց:

Լյուդովիկոսը հանձն առավ գետնախնձորի պաշտպանությունը և պատվիրեց գյուղացիներին նորից սկսել պարապել նրա մշակությամբ: Բայց ժողովրդի տգիտությունը այն աստիճանին էր հասել, վոր նա բարվոք համարեց սովից մեռնել, քան թե սկսել նորից մշակել:

Յերբ թագավորը տեսավ, վոր անկարելի յե ժողովրդին համոզելով գիտակցության բերել, նա Պարմանթիենին իրան ոգնության կանչեց: Պարմանթիենը վոր նշանավոր և խելացի գյուղատնտես էր դիմեց մի խորամանկ միջոցի: Նա պատվիրեց, վոր իր

կալվածներում գետնախնձոր ցանեն, կալվածները շրջապատեց զինվորներով, վորպեսզի գյուղացիները չկարողանան վորեն բան գողանալ յուր ագարակից: Յերբ գետնախնձորի հավաքելու ժամանակը հասավ, նա պատվիրեց զինվորներին. «յեթե գյուղացիք պան և ուղենան գողանալ գետնախնձորները, դուք ձեզ չտեսի տակ զննելով, արգելք չըհանդիսանաք և անուշադրության մատնելով, թողեք, վոր գյուղացիները հաճաքեն տանեն»:

Այդպես ել յեղավ:

Յերբ գյուղացիները տեսան զինվորներով շրջապատված գետնախնձորի դաշտերը՝ սկսեցին հետաքրքրվել և շատ հաճախ գիշերները ծածուկ գալիս ելին գողանում գետնախնձորները, տանում, համ ուտելու, համ ել պահելու, վոր ապագայում ցանեն իրենց արտերում:

Ահա այսպիսով գետնախնձորի մշակությունը, վոր մի ժամանակ դադարել եր Ֆրանսիայում, նորից սկսեց առաջ գնալ: Ժողովուրդը հասկացավ իր սխալը, խելքի յեկավ և այսպիսով ազատվեց սովամահ լինելուց:

Պարմանթիենը հասավ իր նպատակին:

Գյուղացիք նրա հիշատակը հարգելու համար գետնախնձորի մի տեսակը նրա անունով կոչեցին՝ «Պարմանթիեն»:

ԳԵՏՈՒՄԱՆԻՆԻՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Մինչև որս նրա տեսակների թիվը հասնում ե չորս հարյուրի, իսկ մի քանիսները, հազարների են հասցնում: Անկարելի յե մի առ մի թվել այդ բոլորը, բայց գլխավորները և ամենից շատ տարածվածները սրանք են:

Գեոմախնձորի տեսակները իրարից տարբերվում են մի քանի առանձնահատկություններով. որինակ — համով, ֆիդիքալան կազմվածքով, չափով, ձևով և ալին. գույներն ևս նշանակություն ունեն վորոշելու գեոմախնձորի տեսակները:

Հարթ և սակավ աչքեր ունեցող գեոմախնձորը ավելի և գնահատվում, քան մյուս տեսակները:

1. Շավ. Գնդիկները միջակ են, աչիկները բավականին խոր, դեղին, ալուրոտ և մսով. ծիլը դեղին մոմագույն է, իսկ ծայրերը մանուշակագույն, ապրիլին տնկվածը հասնում և ոգոստոսին, շատ արդյունավետ է:

2. Դեղին կլոր վաղահաս. նմանում է վերոհիշյալ տեսակին, հասունում և հուլիսի վերջին:

3. Չյունահատիկ. գնդիկները տափակ ձվաձև են, աչիկները յերես ընկած, միսը սպիտակ է, ծիլը բաց վարդագույն, հասնում է հուլիսի կեսին:

4. Մարժոյեն վաղահաս. գնդիկները ձվաձև են, հաճախ քիչ ծուռ (թեքված են լինում), աչիկները քիչ և շատ յերեսանց, միսը շաա դեղին է, ծիլը սպիտակ դեղնագույն, հասնում է հունիսին. ավելի արդյունաբերում են բռնի ջերմոցային մշակույթներում:

5. Վիկտոր. գնդիկները տափակ են, ծայրերը կտրվածքներ ունեն, միսը դեղին է, ծիլը մանիշակագույն, չափազանց շուտ են հասնում, շատ լավ հարմարվում են ջերմանոցներում մշակելու համար:

6. Հալի քառասնյակ. գնդիկները միջակ են, յերկար կամ նշաձև, միսը

շատ դեղին և, սքանչելի հատկություն ունի, ծիլը վարդագույն թավշանման և, հասնում և ոգոստութիւն, արդյունաբեր և և լավ ել պահվում և:

7. Մանիոմ՝ ըննում. գնդիկները մեծ են, հաճախ անկանոն, կաշին բաց դեղին և, դուրս ցցված աչիկներով, միսը սպիտակ, ծիլը վարդագույն, սեպտեմբերին և հասնում, շատ արդույնավետ և, բայց հատկություններով միջակ և համարվում, մեծ մշակություններին համար շատ հարմար և, դիմացկունության համար շատ գնահատված:

8. Յերշ. գնդիկները յերկարած և, մի քիչ տափակ, կարմիր և քիչ աչիկներ ունեն, միսը դեղին և և ալյուրոտ, ծիլը վարդագույն, սեպտեմբերին և հասնում և շատ յերկար և պահվում:

9. Ուղիղ ըռանող. գնդիկները յերկար են, գույնը բաց կարմիր, աչիկները դուրս ցցված, միսը դեղին և, ծիլը կարմիր, հասնում և սեպտեմբերին, արդյունաբեր և և լավ և պահվում:

10. Մանուշակագույն. գնդիկները կլորած և են, աչիկները խոր, կաշին մանուշակագույն, միսը դեղին, ծիլը մանուշակագույն, արդյունաբեր են և շատ տարածված:

11. Պարմանիթին. գնդիկները տափակ գլանած և են, աչիկները քիչ:

Վերոհիշյալ տեսակների մեջ՝ Շավը, Հալի քառասնյակը, Մանիոմ ըռնումը շատ են մշակվում և համարվում են ամենատարածվածներ ու շուկայում յարգված:

Բազմացնելու ձևեր:

Գետնախնձորը կարելի չէ բազմացնել՝ սերմով, կտորներով, աչիկներով և գնդիկներով:

Սերմով բազմացնելը ընդունված չէ: Հարմար և ընդունված ձևը համարվում է աչիկներով բազմացնելը. այդ ձևով բազմացնելու առավելությունը կայանում է նրանում, վոր մի գնդիկից փոխանակ մի տունիկ ստանալով՝ ստացվում է յերկու, յերեք և նույն իսկ յերբեմն ավելի տունիկեր: Դրա համար ել գնդիկը մասերի յեն բաժանում և յուրաքանչյուր կտորի վրա թողնում են յերկուսից յերեք աչիկ: Տնկելիս պետք է այնպես տնկել, վոր կտրվածքը դեպի գետին լինի, իսկ աչիկները դեպի վերև՝ հողի յերեսը: Գետնախնձորը սիրում է չափազանց

խոնավ հող, վորովհետև սերմացուն փառում է: Գործ են ածում և գնդիկները, վոր պետք է ընտրել միջակ գընդիկներ: Պետք է տնկել շարքերով, իրար մոտ չլինեն: Չափի համար Գործ են ածում փայտե ձողեր 8—10 վերջոկ յերկարության, վորով և չափում են ցանման տեղերը: Գնդիկները հողում պետք է տնկել յերկուս ու կես վերջոկից մինչև յերեք ու կես վերջ: Խորությամբ և վոչ ավելի: Մի դեպատին հողի վրա պետք է տնկել 600—800 մեծ գնդիկներ, 1000—1200 միջակ և 1500—1600 փոքր:

Խնամք յեվ հոգսաւորություն

Հենց վոր գետնախնձորի առաջին տերևները յերևան, պետք է հողը ֆխրացնել, քաղհան անել և մաքրել ավելորդ խոտերից ու բույսերից,

վորոնք խանգարում են ազատ աճելուն:

Յերբ բույսը 3—4½ վերջով բարձրութեան և հասնում, պետք և անմիջապես վրա դնել—հողաթմբել: Այդպիսով բույսը իր ամբողջ ուշժը դարձնում և դեպի արմատները և սկսում և կազմակերպել գնդիկները:

Տաք տեղերում հողաթմբելուց հետո սկսում են ջրել, վորով բույսի սննդարարութիւնը հեշտանում է:

Յուրաքանչյուր շաբթը հավասարապես պետք և ջրել, վորպես զի հավասարապես զարգանան:

Պէտնախնձորի յել պամիդորի պատվասք

Յրանսիացի ամենահայտնի (այժմ վախճանված) պատվաստող Շառլ Բալթեյի վորդին՝ հայտնի բանջարաբույծ

Պ. Լյուսիենը՝ վոսկե խնձորը (կարմիր պամիդոր), պատրիշանի մի քանի տեսակները հաջողութեամբ պատվաստել և գետնախնձորի վրա և իր այդ վորձի հետեանքները ներկայացրել և Յրանսիայի բանջարաբուծական ընկերութեան: Պատվաստված բույսը աճում և և աճում են թե գետնախնձորը հողի տակ և թե պամիդորը հողի յերեսից: Այս տեսակի պատվաստումը տարածված և Յրանսիայում:

Հալվաբելու ժամանակ

Սովորաբար, յերբ գետնախնձորը հասնում և, նրա ցողունը սկսում և կամաց-կամաց թառամել: Բայց այդ ևս չի նշանակում, վոր գնդիկները հասել են, վորովհետեւ շատ անգամ պատահում և, վոր չնայած ցողունը չորացած և լինում, սակայն նրա ծայրին

գտնվող փնջաձև տերեւները դեռ կանաչ են լինում և այդ նշան է, վոր բույսը դեռ կենդանի յե և գնդիկները հասած չեն։ Ուստի պետք է սպասել, վոր բույսը բոլորովին չորանայ։ Յերբ գետնախնձորը հասած է լինում, ցողունը չի դիմանում ամենաթեթև քամուն, իսկույն դուրս է գալիս հողից։ Վորից կարելի յե հասկանալ, վոր գետնախնձորը արդեն հասած է և կարելի յե հավաքել։

Դեռ չորացած ցողուն պետք է հավաքել և ապա գետնախնձորը տակհանանել։ Հողից հանելուց հետո, մաքրել և գնդիկները ածել մեշոկներում և պահել, վորպեսզի արեւը կամ լույսը չընկնեն վրանները և չփչանա։

ԳԵՏՆԱԽՈՒՆՁՈՐԻ պահելու միջոցներ

Յերբ գետնախնձորը դաշտից տուն են բերում, առաջին խնամքը պիտի

լինի նրանց լցնել առաջուց պատրաստած մառանները, վոր պետք է չոր լինեն և լույսից զուրկ։

Շատերը մառանների փոխարեն, տան ամենաչոր անկյուններից մեկում փոսեր են քանդում, վորոնք նմանում են ցորենի փոքրիկ հորերին։

Այս հորերի հատակը լցնում են մի լավ շերտ չոր ալագով։ Ալագի վրա մի շերտ յարդ կամ չոր տերեւներ են լցնում, ապա գետնախնձորը շերտ-շերտ դարսում են, յուրաքանչյուր շերտ ծածկելով։ հորը լցնելուց հետո վերջն ել լցնում են մի շերտ չոր հող, վորով և հորը փակված է համարվում։

Ապագայում գնդիկները փտուփտից և խոնավությունից ազատելու համար, հորի մեջ, իրարից հավասար հեռավորությամբ, թիթեղյա փոքրիկ խողովակներ են հարմարեցնում, վոր հորից

դուրս բերվին յերես՝ ողափոխելու համար հորերը:

Այսպիսով գնդիկները թե ավելի յերկար են դիմանում և թե աւելի լավ պահվում:

Հիվանդություններ յեվ վնասակար միջոցներ

Խնչպես ըստր բույսերը, գետնախնձորն ել յենթակա յե մի շարք հիվանդությունների, վորոնք փնասում — չորացնում են թե ցողունը և թե գնդիկները:

Այդ հիվանդությունից ամենից փնասակար և վտանգավորը գետնախնձորի ըորքոսը կամ մզլուկն ե, վոր յերևան ե գալիս վարակված գետնախնձորի տերևների վրա: Վարակված տերևը նախ զժգույն գորշ գույն ե ստանում,

սեանում և կարճ ժամանակում բոլորովին չորանում ե:

Այս հիվանդությունը շատ անգամ անցնում ե գնդիկների վրա, վորի կեղևի վրա յերևում են մութ գորշագույն բծեր, փոքրիկ անկիկների նման, յետո կեղևից ել անցնում ե գեպի ներսը և գնդիկների մեջ առաջանում փտումներ կամ փտախտ:

Հիվանդության դեմ իբրեւ գեղ գործածվում ե հետեյալ աղբից բաղադրություն ունեցող հեղուկը.

Ծծմբա-արջասպ	5 գրվ.
Նոր հանգած կիր	5 »
Մեղրակ	5 »
Ջուր	100 լիտր

Վերահիշյալ բաղադրությունից պատրաստած դեղը, սրսկիչ գործիքներով պետք ե անմիջապես սրսկել գետնախնձորի ամբողջ ցանքսը, վորքան կա-

րելի յե կանոնավոր, վորպեսզի դեղը հավասարապես տարածվի բոլոր բույսերի տերևների վրա:

Կա և ուրիշ հիվանդություններ և սրանց ժամանակն ել գործ են ածում գլխավորապես վերոհիշյալ դեղերը: Հիվանդությունների տեսակներն են՝ ծիլախտ, փթումն, քաղցկեղ, բուսմարմին: Վնասատու միջատներ են՝ արդնուկ կամ նիզակակիր միջատ, խլրդածղրիտ, Զորյակըն, իսկ կենդանիներից՝ դաշտային մկներ:

Սասանյակահ բուփր

Մեր յերկրում բանում ե յեղինճ կոչված բույսը, վորի տերևների վրա կան բազմաթիվ մանրիկ ու սուր խողովականման փշեր, վորոնք լիքն են յուրատեսակ մի թույնով: Յեթե ձեռքերս դիպցնենք այդ տերևներին, խոկույն

կը զգաք այրող ու տհաճ խայթոց, և մեր ձեռքը կսկսի մարմաշել, ցավել: Վերջերս Ավստրալիայում գտել են մի նոր բույս, վորին տրված ե տեղական լեզվով (ծակող ծառ) անունը: Զարմանալի հատկություն ունի այդ բույսը. բավական ե վոր մարդ թեթե կերպով դիպչի այդ բույսին, անպայման դրան հետևում ե խելագարություն: Բույսը արտաքուստ ունի գեղեցիկ տեսք և գրավում ե շատերին. սակայն միաժամանակ իր շուրջը տարածում ե զըզվելի և անդուրեկան հոտ, այնպես վոր տեղացիները զգուշանում յեն և չեն մոտենում նրան: Սակայն ով անզգուշաբար և կամ անգիտակցաբար դիպչում ե նրա տերևներին, զգում ե սաստիկ և սուր ցավ, չնայելով ձեռքի վրա այրված վերքի կամ բորբոքման վոչ մի նշան չկա: Մինչդեռ յե-

դինճի խայթոցից ձեռքի վրա բշտիկներ
են գոյանում: Սատանայական այդ
ծառի պատճառով ցավ յերբեմն ամիս-
ներ ե տևում, և մարդուն կամ կեն-
դանուն վերջիվերջո խելագարեցնում
է: Շատ հաճախ պատահում է, վոր
ձիերը անգիտակցաբար դիպչելով այդ
բույսին, կատաղելով սկսում են այս
կողմ այն կողմ վազվզել. այդպիսի
դեպքերում իսկույն մարդիկ նրան սը-
պանում են, կարճելու համար նրա
տանջանքները:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հյուսիսային բելուի գաղսնի- ներ

Հյուսիսային բեկոր մի շարք հատ-
կություններ ունի, վորոնք իրենց
բնույթով շատ զարմանալի յեն և

գտնվում են միմիայն հենց հյուսիսա-
յին բեկորում:

Մենք գիտենք, վոր յերկրի մակե-
րևայթը յուրաքանչյուր վարկյանում
465 մետր արագությամբ պտտում է
յերկրի առանցքի շուրջը, վորը մի յե-
րեակայական գիծ է հյուսիսային և
հարավային բեկորների միջև: Ուրեմն
մենք ել մեր ամբողջ կյանքի ընթաց-
քում յուրաքանչյուր բուրյում 28 կի-
լոմետր արագությամբ շարունակ ա-
ռաջ ենք սլանում: Պարզ է, վոր այս
շարժումը շարունակ փոքրանում, գտն-
վադում է, յերբ մենք հասարակածից
մոտենում ենք բելուներին: Յեւ յեթե
մեկը, որինակ Ամունգսենը, կանգնի
հյուսիսային բեկորի ճիշտ մեջտեղում,
յերկրի առանցքի ծայրին, այն ժամա-
նակ նա կը գտնի բացարձակ հանգըս-
տության մեջ, այն պահուն, յերբ մենք
մի ժամում 1.600 կիլոմետր արագու-
թյամբ առաջ ենք սլանում: Սակայն
Ամունգսենը, վորը ընտրել է հյուսիսա-
յին բեկորի ճիշտ մեջտեղը վորպես

հարմար կետ, շատ ավելի ուժեղ և տարրինակ ապրումներ պիտի ունենա.— այսպես, որինակ, նրա համար գոյությունն չպիտի ունենա ժամանակը մեզ համար սովորական իմաստով:

2^ե վոր, որվա նույն ժամանակին, յեթե մի միջորյականի վրա, որինակ ժամի 1-ն է, հետևյալի վրա ժամի 2-ն է, յերրորդի վրա ժամի 3-ն է, և այլն. որինակ, յեթե այս բոլորիս մեզ մոտ ժամի 9-ն է, Մոսկվայում ժամի 8-ն է, վորովհետև Թիֆլիսն ու Մոսկվան տարբեր միջորյակների վրա յեն գտնվում: Բայց չե՞ վոր, վերջիվերջո, այդ բոլոր միջորյակները, ձգվելով հասարակածից դեպի բևեռները, մոտենում են շարունակ և հյուսիսային բևեռի ճիշտ մեջտեղում, Ամունդսենի վտանների տակը, միանում են իրար, այնպես վոր թեյորիապես յերկրի բոլոր ժամանակներն էլ գտնվում են հյուսիսային բևեռի ծայրում: Բերլինի աշխարհագրագետ պրոֆ. Ո. Բախինը հյուսիսային բևեռի գաղտնիքների մասին վեր-

ջին իր հոգվածներից մեկում հետևյալ հետաքրքրական յերևույթն է պատմում. յեթե մեկը կանգնած է Գրինիչի (Լոնդոնի մոտ) որսերվատորիայի ժամացույցով ճիշտ ցերեկվա ժ. 12-ին հյուսիսային բևեռի վրա, յերեսը շուտոված դեպի Գրինիչի միջորյականը, և յեթե նա անի մի քայլ առաջ, նրա համար նորից ժամը 12-ը կը լինի. յեթե մի քայլ անի դեպ աջ, այն ժամանակ նրա համար առավոտյան ժամը 6-ն է դառնում. մի քայլ դեպի ձախ, արդեն յերեկոյան ժամը 6-ն է, մի քայլ հետ, արդեն կես գիշեր է: Մեր յերկիրը, ինչպես հայտնի յե, յերկրաչափականբոլորովին կոր գունդը չի, այլ յերկրի շարունակական պտույտից առաջացող կենտրոնախույս ուլթի շնորհիվ, նրա հասարակածային շրջանները ավելի կորնթարթ են դառնում, իսկ բևեռները՝ տափարակ: Ուրեմն ով կանգնած է հյուսիսային բևեռի վրա, նա 20 կիլոմետրի չափ ավելի մոտ է յերկրի կենտրոնին, քան, որինակ, հա-

սարակածային շրջանում ապրող մեկը: Յեւ վորովհետեւ յերկրի ձգողական ուժը, ապա և ուրեմն մարմինների կշիռը կապ ունի այն հանգամանքի հետ, թե տվյալ իրը ինչ հեռավորութեան վրա յե գտնվում յերկրի կենտրոնից, դրանից ել առաջանում է միևնույն իրի քաշի տարրերությունը բևեռի և հասարակածի վրա: Որինակ, յեթե Ամունդսենը հասարակածի վրա քաշում է (անպայման զսպանակային կշեռքով) 80 կիլոգրամ, նույն պայմաններում նույն Ամունդսենը բևեռի վրա կը քաշի 80,6 կիլոգրամ:

Հյուսիսային բևեռը ելի շատ հետաքրքրական դադանիքներ ունի: Մեզ հայտնի ցերեկվա և գիշերվա ժամանակների տարբերությունը բևեռների վրա փոյություն չունի: Արեւ մարտի 20-ին բարձրանում է հորիզոնից վեր, այդպես մնում է մինչև սեպտեմբերի 23-ը շարունակ տեսանելի, և հետո անհայտանում է, ամբողջ կիս տարույ հետո նորից յերևալու համար:

Արեւի ճառագայթների բեկումը բևեռների վրա բոլորովին տարորինակ է, վորից և առաջանում են տարրեր բնույթի յեղանակներ: Արդյոք պատկերացնում ենք մենք, վոր յեթե մեկը կանգնած է ուղիղ հյուսիսային բևեռի վրա, նա կորցրել է վոչ միայն ժամանակը, այլ և յերկրի կողմերից յերեքը: Նրա համար գոյություն չունի այլևս վոչ հյուսիս, վոչ արեւելք և վոչ ել արեւմուտք, այլ ուր վոր նայի, ամեն տեղ ամեն ինչ միմիայն հարավ է:

Մակայն հյուսիսային բևեռի ամենախորհրդավոր գաղտնիքն ու հրաշալիքը «հյուսիսափայլն» է: Այս յերևութի խակական պատճառը տակավին բոլորովին պարզված չէ: Մակայն, ըստ նորագույն հետազոտությունների, այս յերևութի մեջ, ինչպես յերևում է, գեր է խաղում մի նոր գաղ վորին «դեյոկոորոնիում» անունն են տվել, և վորը բաղկացած է բորակածնից, թրթվածնից ու հելիումից:

Գիտութեան վերջին խոսքը, վորը բացատրում է հյուսիսափայլի ծագումը, վերաբերում է ելեքտրոմագնիսիզմին: Արևը իրենից արտադրում ու ցրում է աներեակայելի քանակութեամբ ելեքտրոններ, վորոնց մի աննշան մասն ելնկնում է յերկրի վրա: Յեթե պատկերացնենք յերկրագունդը վորպես մի մագնիսական մարմին իր հյուսիսային ու հարավային բևեռներով, այն ժամանակ ակնհայտնի կը լինի, վոր հյուսիսափայլը պետք է առաջանա միմիայն բևեռներում, վերոհիշյալ զագի հսկա տարածութեան մեջ ելեքտրոնների հոսանքի բեկումից: Գիտնականները նույն յերևույթը փորձնական ճանապարհով առաջացրել են լաբորատորիայում:

ՎԵՐՋ

ՏԱԽՏԱԿ ՈՐԱՅՈՒՅՑ

1927 թ.

1928 թ.

1929 թ.

Հ Ո Ւ Ն Վ Ա Ր	Գ. Ե. Ե. Զ. Ը. Թ. Դ.
1	1
2 3 4 5 6 7 8	2 3 4 5 6 7 8
9 10 11 12 13 14 15	9 10 11 12 13 14 15
16 17 18 19 20 21 22	16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29	23 24 25 26 27 28 29
30 31	30 31

ՓԵՏՐՎԱՐ	1 2 3 4 5
6 7 8 9 10 11 12	6 7 8 9 10 11 12
13 14 15 16 17 18 19	13 14 15 16 17 18 19
20 21 22 23 24 25 26	20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31	27 28 29 30 31

Մ Ա Ր Տ	1 2 3 4 5
6 7 8 9 10 11 12	6 7 8 9 10 11 12
13 14 15 16 17 18 19	13 14 15 16 17 18 19
20 21 22 23 24 25 26	20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31	27 28 29 30 31

Ա Պ Ր Ի Լ	1 2
3 4 5 6 7 8 9	3 4 5 6 7 8 9
10 11 12 13 14 15 16	10 11 12 13 14 15 16
17 18 19 20 21 22 23	17 18 19 20 21 22 23
24 25 26 27 28 29 30	24 25 26 27 28 29 30

Մ Ա Յ Ի Ս	1 2 3 4 5 6 7
8 9 10 11 12 13 14	8 9 10 11 12 13 14
15 16 17 18 19 20 21	15 16 17 18 19 20 21
22 23 24 25 26 27 28	22 23 24 25 26 27 28
29 30 31	29 30 31

Հ Ո Ւ Ն Ի Ս	1 2 3 4
5 6 7 8 9 10 11	5 6 7 8 9 10 11
12 13 14 15 16 17 18	12 13 14 15 16 17 18
19 20 21 22 23 24 25	19 20 21 22 23 24 25
26 27 28 29 30	26 27 28 29 30

Հ Ո Ւ Լ Ի Ս	1 2
3 4 5 6 7 8 9	3 4 5 6 7 8 9
10 11 12 13 14 15 16	10 11 12 13 14 15 16
17 18 19 20 21 22 23	17 18 19 20 21 22 23
24 25 26 27 28 29 30	24 25 26 27 28 29 30

Ո Գ Ո Ս Տ Ո Ս	1 2 3 4 5 6
7 8 9 10 11 12 13	7 8 9 10 11 12 13
14 15 16 17 18 19 20	14 15 16 17 18 19 20
21 22 23 24 25 26 27	21 22 23 24 25 26 27
28 29 30 31	28 29 30 31

ՍԵՄՏԵՄԲԵՐ	1 2 3
4 5 6 7 8 9 10	4 5 6 7 8 9 10
11 12 13 14 15 16 17	11 12 13 14 15 16 17
18 19 20 21 22 23 24	18 19 20 21 22 23 24
25 26 27 28 29 30	25 26 27 28 29 30

ՀՈԿՏԵՄԲԵՐ	1
2 3 4 5 6 7 8	2 3 4 5 6 7 8
9 10 11 12 13 14 15	9 10 11 12 13 14 15
16 17 18 19 20 21 22	16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29	23 24 25 26 27 28 29

ՆՈՅԵՄԲԵՐ	1 2 3 4 5
6 7 8 9 10 11 12	6 7 8 9 10 11 12
13 14 15 16 17 18 19	13 14 15 16 17 18 19
20 21 22 23 24 25 26	20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31	27 28 29 30 31

Հ Ո Ւ Ն Վ Ա Ր	Գ. Ե. Ե. Զ. Ը. Թ. Դ.
1	1
2 3 4 5 6 7	2 3 4 5 6 7
8 9 10 11 12 13 14	8 9 10 11 12 13 14
15 16 17 18 19 20 21	15 16 17 18 19 20 21
22 23 24 25 26 27 28	22 23 24 25 26 27 28
29 30 31	29 30 31

ՓԵՏՐՎԱՐ	1 2 3 4
5 6 7 8 9 10 11	5 6 7 8 9 10 11
12 13 14 15 16 17 18	12 13 14 15 16 17 18
19 20 21 22 23 24 25	19 20 21 22 23 24 25
26 27 28 29	26 27 28 29

Մ Ա Ր Տ	1 2 3
4 5 6 7 8 9 10	4 5 6 7 8 9 10
11 12 13 14 15 16 17	11 12 13 14 15 16 17
18 19 20 21 22 23 24	18 19 20 21 22 23 24
25 26 27 28 29 30 31	25 26 27 28 29 30 31

Ա Պ Ր Ի Լ	1 2 3 4 5 6 7
8 9 10 11 12 13 14	8 9 10 11 12 13 14
15 16 17 18 19 20 21	15 16 17 18 19 20 21
22 23 24 25 26 27 28	22 23 24 25 26 27 28
29 30	29 30

Մ Ա Յ Ի Ս	1 2 3 4 5
6 7 8 9 10 11 12	6 7 8 9 10 11 12
13 14 15 16 17 18 19	13 14 15 16 17 18 19
20 21 22 23 24 25 26	20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31	27 28 29 30 31

Հ Ո Ւ Ն Ի Ս	1 2
3 4 5 6 7 8 9	3 4 5 6 7 8 9
10 11 12 13 14 15 16	10 11 12 13 14 15 16
17 18 19 20 21 22 23	17 18 19 20 21 22 23
24 25 26 27 28 29 30	24 25 26 27 28 29 30

Հ Ո Ւ Լ Ի Ս	1 2 3 4 5 6 7
8 9 10 11 12 13 14	8 9 10 11 12 13 14
15 16 17 18 19 20 21	15 16 17 18 19 20 21
22 23 24 25 26 27 28	22 23 24 25 26 27 28
29 30 31	29 30 31

Ո Գ Ո Ս Տ Ո Ս	1 2 3 4
5 6 7 8 9 10 11	5 6 7 8 9 10 11
12 13 14 15 16 17 18	12 13 14 15 16 17 18
19 20 21 22 23 24 25	19 20 21 22 23 24 25
26 27 28 29 30 31	26 27 28 29 30 31

ՍԵՄՏԵՄԲԵՐ	1
2 3 4 5 6 7 8	2 3 4 5 6 7 8
9 10 11 12 13 14 15	9 10 11 12 13 14 15
16 17 18 19 20 21 22	16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29	23 24 25 26 27 28 29

ՀՈԿՏԵՄԲԵՐ	1 2 3 4 5 6
7 8 9 10 11 12 13	7 8 9 10 11 12 13
14 15 16 17 18 19 20	14 15 16 17 18 19 20
21 22 23 24 25 26 27	21 22 23 24 25 26 27
28 29 30 31	28 29 30 31

ՆՈՅԵՄԲԵՐ	1 2 3
4 5 6 7 8 9 10	4 5 6 7 8 9 10
11 12 13 14 15 16 17	11 12 13 14 15 16 17
18 19 20 21 22 23 24	18 19 20 21 22 23 24
25 26 27 28 29 30	25 26 27 28 29 30

Հ Ո Ւ Ն Վ Ա Ր	Գ. Ե. Ե. Զ. Ը. Թ. Դ.
1	1
2 3 4 5	2 3 4 5
6 7 8 9 10 11 12	6 7 8 9 10 11 12
13 14 15 16 17 18 19	13 14 15 16 17 18 19
20 21 22 23 24 25 26	20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31	27 28 29 30 31

ՓԵՏՐՎԱՐ	1 2
3 4 5 6 7 8 9	3 4 5 6 7 8 9
10 11 12 13 14 15 16	10 11 12 13 14 15 16
17 18 19 20 21 22 23	17 18 19 20 21 22 23
24 25 26 27 28	24 25 26 27 28

Մ Ա Ր Տ	1 2
3 4 5 6 7 8 9	3 4 5 6 7 8 9
10 11 12 13 14 15 16	10 11 12 13 14 15 16
17 18 19 20 21 22 23	17 18 19 20 21 22 23
24 25 26 27 28 29 30	24 25 26 27 28 29 30

Ա Պ Ր Ի Լ	1 2 3 4 5 6
7 8 9 10 11 12 13	7 8 9 10 11 12 13
14 15 16 17 18 19 20	14 15 16 17 18 19 20
21 22 23 24 25 26 27	21 22 23 24 25 26 27
28 29 30	28 29 30

Մ Ա Յ Ի Ս	1 2 3 4
5 6 7 8 9 10 11	5 6 7 8 9 10 11
12 13 14 15 16 17 18	12 13 14 15 16 17 18
19 20 21 22 23 24 25	19 20 21 22 23 24 25
26 27 28 29 30 31	26 27 28 29 30 31

Հ Ո Ւ Ն Ի Ս	1
2 3 4 5 6 7 8	2 3 4 5 6 7 8
9 10 11 12 13 14 15	9 10 11 12 13 14 15
16 17 18 19 20 21 22	16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29	23 24 25 26 27 28 29

Հ Ո Ւ Լ Ի Ս	1 2 3 4 5 6
7 8 9 10 11 12 13	7 8 9 10 11 12 13
14 15 16 17 18 19 20	14 15 16 17 18 19 20
21 22 23 24 25 26 27	21 22 23 24 25 26 27
28 29 30 31	28 29 30 31

Ո Գ Ո Ս Տ Ո Ս	1 2 3
4 5 6 7 8 9 10	4 5 6 7 8 9 10
11 12 13 14 15 16 17	11 12 13 14 15 16 17
18 19 20 21 22 23 24	18 19 20 21 22 23 24
25 26 27 28 29 30 31	25 26 27 28 29 30 31

ՍԵՄՏԵՄԲԵՐ	1 2 3 4 5 6 7
8 9 10 11 12 13 14	8 9 10 11 12 13 14
15 16 17 18 19 20 21	15 16 17 18 19 20 21
22 23 24 25 26 27 28	22 23 24 25 26 27 28
29 30	29 30

ՀՈԿՏԵՄԲԵՐ	1 2 3 4 5
6 7 8 9 10 11 12	6 7 8 9 10 11 12
13 14 15 16 17 18 19	13 14 15 16 17 18 19
20 21 22 23 24 25 26	20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31	27 28 29 30 31

ՆՈՅԵՄԲԵՐ	1 2
3 4 5 6 7 8 9	3 4 5 6 7 8 9
10 11 12 13 14 15 16	10 11 12 13 14 15 16
17 18 19 20 21 22 23	17 18 19 20 21 22 23
24 25 26 27 28 29 30	24 25 26 27 28 29 30

66
2013

20 02

ՀՀ Ազգային գրադարան



757

7—



Վաճառվում և թիֆլիսի բոլոր գրադարաններին
և կազմողի մաս՝ ԲՈՒՄԱՆ ԴՈՒ. N 10,
ՄԱՅԻՍ. Գումարով գնողը կրթիչից: